

Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիա

Գեոդերալին հետազոտությունների կենտրոն

**Կանանց նկատմամբ խտրականության բոլոր
ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի
կոնվենցիայի իրականացումը
Հայաստանի Հանրապետությունում
2002-2007 թթ.**

Այլընտրանքային զեկույց

*Չեկույցը պատրաստել է
Համալսարանական կրթությանը
կանանց ասոցիացիայի
Գեոդերալին հետազոտությունների կենտրոնը*

Երևան 2007



«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ.»

այլընտրանքային զեկույցը

պատրաստվել է

«Գենդերային գիտելիքները որպես Ժողովրդավարական մշակույթի և իրավագիտակցության ձևավորման նախադրյալ»

նախագծի շրջանակներում, որը ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (Վարչավա) ֆինանսական աջակցությամբ իրականացվում է

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետների կողմից:
Չեկույցում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի տեսակետների հետ:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան,
Գենդերային հետազոտությունների կենտրոնը և փորձագետները երախտագիտություն են հայտնում հանրապետության նախարարություններին և գերատեսչություններին, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարներին և ակտիվիստներին կլոր սեղաններին և ֆոկուս խմբերին սիրահոժար մասնակցելու համար, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր վիճակագրական տվյալներ և այլ նյութեր են տրամադրել:



Չեկույցը պատրաստել են Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գեներային հետազոտությունների կենտրոնի փորձագետները

Չեմնա Հասրաթյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, Գեներային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, Երևանի «Ինտերլինգվա» լեզվաբանական համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, նախագծի ղեկավար

Թամարա Հովնաթանյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի վարչության անդամ, «Նովոյե վրեմյա» թերթի քաղաքական մեկնաբան

Վլադիմիր Օսիպով

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Լիլիթ Չաքարյան

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու



Բովանդակություն

Ներածություն	5
Զեկույցի ձևաչափը	9
Երկրի համառոտ բնութագիրը	12

ՄԱՍ 1

Առանցքային հիմնախնդիրների վերլուծություն

Հոդված 1. «Խտրականություն» հասկացությունը	21
Հոդված 2. Պետության՝ խտրականության վերացման քաղաքականություն վարելու պարտավորությունները	23
Հոդված 3. Կանանց առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցների համակարգը	27
Հոդված 4. Ժամանակավոր հատուկ միջոցները	31
Հոդված 5. Տղամարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելների փոփոխում	35
Հոդված 6. Կանանց առևտրի և մարմնավաճառության շահագործման բոլոր ձևերի կանխումը	38

ՄԱՍ 2

Հոդված 7. Կանանց նկատմամբ խտրականության վերացումը երկրի քաղաքական և հասարակական կյանքում	41
---	----

ՄԱՍ 3

Հոդված 10. Խտրականության վերացումը կրթության ոլորտում	49
Հոդված 11. Զբաղվածության ոլորտում կանանց նկատմամբ խտրականության վերացումը	52
Հոդված 12. Խտրականության վերացումը առողջապահության ոլորտում	57
Հոդված 14. Գյուղի կանանց նկատմամբ խտրականության վերացումը	62
Եզրակացություն	66
Հավելված I	68
Հավելված II	70



Ներածություն

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան՝ ընդունված 1979 թ. դեկտեմբերի 18-ին, համակողմանի փաստաթուղթ է, որն ամփոփում է ՄԱԿ-ի բազմամյա ջանքերը կանանց իրավունքների պաշտպանության միջազգային իրավաբանական չափորոշիչների համակարգման ուղղությամբ: Ըստ էության, ներկայումս դա միակ միջազգային իրավաբանական գործիքն է, որը նախատեսված է տղամարդկանց և կանանց անհրավահավասարության դեմ պայքարի համար:

Հայաստանը Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) վավերացրել է 1993 թվականի հունիսի 3-ին՝ դրանով իսկ ստանձնելով մի շարք պարտավորություններ, որոնք նախատեսում են խտրականության բացառմանը և քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային ոլորտներում կանանց համակողմանի զարգացման և առաջընթացի ապահովմանն ուղղված համալիր գործողությունների իրականացում: Տվյալ կոնվենցիայի յուրահատկությունն այն է, որ պետությանը պարտավորեցնում է համապատասխան քայլեր ձեռնարկել գիտակցության առավել խորքային մակարդակների բարեփոխման, տղամարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելների փոփոխման համար: Կոնվենցիային միանալը նշանակում է նաև, որ պետությունը ոչ միայն հռչակում է հարգանքը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների նկատմամբ, այլև պարտավորություն է ստանձնում ապահովել հավասար հնարավորություններ դրանց իրականացման համար: Բացի այդ, կոնվենցիան մեկնաբանվում է որպես «դրական գործողությունների» ծրագիր, ուստի պետությունը ընդունել է դրանում ամրագրված գերակա իրավունքների ընձեռնման սկզբունքը: Կոնվենցիայի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նախատեսում է պետության ստանձնած պարտավորությունների կատարման մոնիտորինգ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (այսուհետ՝ Կոնվենցիայի կոմիտե)՝ որպես Կոնվենցիայում նախատեսված մոնիտորինգի համակարգը համադասող փորձագիտական մարմնի, առկայությունը, անշուշտ, բարձրացնում է դրա արդյունավետությունը գենդերային հավասարություն հռչակող այլ փաստաթղթերի համեմատությամբ: Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությունը արտացոլված է փաստորեն գենդերային հավասարությանը



նվիրված բոլոր հետագա փաստաթղթերում, մասնավորապես Պեկինյան գործողությունների ծրագրում և Հազարամյակի զարգացման նպատակներում, որոնց նույնպես Հայաստանը միացել է:

Վավերացումից հետո անցած ժամանակաշրջանում Հայաստանը կոնվենցիայի կոմիտե է ներկայացրել երկու հաշվետվություն. առաջինը 1996 թվականին և երկրորդը (պարբերական)՝ 1999-ին: Երկրորդ հաշվետվության կապակցությամբ Կոմիտեի եզրափակիչ դիտողությունները Հայաստանի կառավարությանն են ուղարկվել 2002 թվականին: Այսպիսով, կառավարության հերթական հաշվետվությունն ընդգրկում է 2002-ից մինչև 2007 թվականներն ընկած ժամանակահատվածը:

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2006 թվականի մայիսի 23-ին, ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Կոնվենցիայի Կամրնտիր արձանագրությունը, որն ընդունվել է 2000 թ. դեկտեմբերին: Այդ հանգամանքը կանանց նոր հնարավորություն է ընձեռում ազգային բոլոր միջոցներն սպառելուց հետո անձամբ կամ կազմակերպությունների անունից բողոք ներկայացնելու Կոնվենցիայի կոմիտե իրենց իրավունքների խախտման մասին:

Համաձայն ձևավորված գործելակերպի՝ կառավարությունները հերթական պարբերական զեկույցի նախապատրաստման ընթացքում կողմնորոշվում են ըստ նախորդ հաշվետվության վերաբերյալ Կոնվենցիայի կոմիտեի եզրափակիչ դիտողությունների և հանձնարարականների: Այդ մոտեցումն է կիրառվել սույն այլընտրանքային զեկույցը կազմելիս: Հայաստանի 2002 թվականի հաշվետվության կապակցությամբ մտահոգություն է արտահայտվել հետևյալ հարցերի առնչությամբ.

- քաղաքական կառույցներում կանանց ցածր ներկայացվածությունը և քաղաքականության մեջ կանանց մասնակցության բարձրացմանն ուղղված հատուկ ժամանակավոր միջոցների բացակայությունը,
- կոնվենցիայի կիրարկման ուղղությամբ պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների սահմանափակ համագործակցությունը,
- ընտանեկան բռնության չափերի մեծացումը և ազգային օրենսդրությունում բռնության վերաբերյալ հատուկ դրույթների բացակայությունը,
- թրաֆիկինգի և դրա դեմ պայքարի համապարփակ ռազմավարության բացակայությունը,
- առողջապահական ծառայությունների համակարգի անմատչելիությունը,
- զենդերային կարծրատիպերի տարածվածությունը,
- գործազրկության բարձր մակարդակը,
- զբաղվածության ոլորտում խտրական գործելակերպը,
- ըստ սեռի հատկանիշի տարաբաժանված վիճակագրական տեղեկատվության պակասը:



Սույն զեկույցը պատրաստելիս հատուկ ուշադրություն է հատկացվել նշված հիմնախնդրային ոլորտներին: Կոմիտեն կառավարության ուշադրությունն է հրավիրել նաև Հայաստանում եզրափակիչ հանձնարարականների և զենդերային հավասարության ձեռքբերմանն ուղղված այլ միջազգային փաստաթղթերի լայն տարածման անհրաժեշտության վրա:

Սակայն թե՛ զեկույցները, թե՛ Կոմիտեի մեկնաբանություններն ու հանձնարարականները մինչև օրս հրապարակային լուրջ քննարկման առարկա չեն դարձել, չեն քննարկվել խորհրդարանում, չեն արժանացել հասարակական կազմակերպությունների պատշաճ ուշադրությանը և չեն դարձել հասարակայնության լայն խավերի սեփականությունը: Հազվադեպ քննարկումները կամերային բնույթ են ունեցել և սահմանափակվել կա՛մ տվյալ հարցում շահագրգիռ կանանց կազմակերպությունների նեղ շրջանի նախաձեռնություններով, կա՛մ հաշվետու զեկույցների համար պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կողմից կազմակերպված ձևական քննարկումներով՝ այդ նույն կազմակերպությունների ներգրավմամբ:

Հայաստանում Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ այլընտրանքային զեկույցը, որ ներկայացվում է ստորև, պատրաստել է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետների խումբը ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (Վարշավա) աջակցությամբ իրականացվող **«Գենդերային գիտելիքները որպես ժողովրդավարական մշակույթի և իրավագիտակցության ձևավորման նախադրյալ»** նախագծի շրջանակներում: Ձեկույցն ընդգրկում է երկրորդ պարբերական հաշվետվությունից հետո ընկած ժամանակահատվածը՝ 2002- 2007 թվականները (առանձին դեպքերում ներկայացված է հիմնախնդիրների շարժընթացը՝ ներառելով նաև ավելի վաղ ժամանակաշրջաններ):

Ձեկույցի նպատակները.

- կոնվենցիայի կատարման անկախ գնահատում մի շարք առանցքային ոլորտների և պարտավորությունների առնչությամբ,
- Հայաստանի Հանրապետությունում Կոնվենցիայի իրականացումը խոչընդոտող խնդիրների բացահայտում և դրանց լուծման հնարավոր ուղիների կանխորոշում՝ կառավարությանը և այլ պատասխանատու կառույցներին ուղղված առաջարկություններով:

Ակնկալվող արդյունքները.

Այլընտանքային զեկույցի պատրաստումը և քննարկումը հնարավորություն կտա՝



- բացահայտելու երկրում կանանց վիճակի և նրանց իրավունքների պաշտպանության հետ կապված իրադրությունը,
- բարձրացնելու իշխանական կառույցների պատասխանատվությունը, որոնց իրավասությունների մեջ է մտնում թե՛ կանանց վիճակի բարելավմանն ուղղված պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը, թե՛ Կոնվենցիայի կոմիտեի համար զեկույցի պատրաստումը,
- ներկայացնելու երաշխավորություններ, որոնք կօգնեն խուսափել իրավիճակի միակողմանի մեկնաբանությունից և կնպաստեն հրաժարմանը կանանց նկատմամբ խտրականության վերացման կիսակատար միջոցներից,
- հասարակայնության ուշադրությունը սևեռելու երկրի՝ կոնվենցիայի իրականացման կապակցությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վերահսկողության վրա,
- հանրապետության հասարակական, առաջին հերթին կանանց կազմակերպություններին տրամադրելու փաստական նյութեր և գործիքներ կանանց շահերի առաջնդման և նրանց իրավունքների պաշտպանության համար,
- խթանելու սոցիալական գործընկերությունը իշխանական կառույցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև խտրական գործելակերպը հաղթահարելու և դեպի գույակշռված ժողովրդավարություն երկրի առաջխաղացումն ապահովելու համար:



Չեկույցի ձևաչափը

Այլընտրանքային զեկույցի նախապատրաստումը իրականացվել է Կոնվենցիայի կոմիտեի ղեկավար սկզբունքների և պարբերական ու այլընտրանքային զեկույցների կազմման վերաբերյալ հատուկ ուղեցույցների¹ հիման վրա: Փորձագետներն ուսումնասիրել են այլ երկրների փորձը այլընտրանքային զեկույցների մշակման գործում: Կիրառվող բազմաթիվ ձևերից և մոտեցումներից ընտրված և Հայաստանի իրավիճակի առանձնահատկության նկատառմամբ ձևափոխված ձևաչափը համապատասխանում է այլընտրանքային զեկույցների համար արված ընդհանուր երաշխավորություններին և ներառում է երեք հիմնական բաժին:

1. Ներածություն: Երկրի համառոտ բնութագիրը:
2. Չեկույցի ամփոփ նկարագիրը:
3. Ըստ հողվածների՝ առանցքային հիմնախնդիրների վերլուծություն՝ յուրաքանչյուր հողվածում հիմնախնդրային բնագավառների և զեկույցում դիտարկված խտրական գործելակերպի հաղթահարմանն ուղղված երաշխավորությունների առանձնացմամբ:

Չեկույցի մեթոդաբանությունը

Մեթոդաբանության ընտրության հարցում փորձագետների խումբն առաջնորդվել է Կոնվենցիայի կոմիտեի ղեկավար սկզբունքներով և պաշտոնական պարբերական և այլընտրանքային զեկույցների կազմման հատուկ ձեռնարկներով: Ընտրված մեթոդիկան հիմնված է երեք բաղադրիչների զուգակցման վրա՝ իրավիճակի գնահատման, ըստ հողվածների վերլուծության և թեմատիկ մոտեցման՝ երկրի համար առավել կարևոր հիմնախնդիրների շեշտադրմամբ:

Կոնվենցիայի կոմիտե ներկայացվելիք այլընտրանքային զեկույցը նախապատրաստելիս փորձագետները նպատակահարմար են գտել խորությամբ վերլուծել կոնվենցիայի իրականացման ուղղությամբ երկրի ոչ բոլոր, այլ միայն առանցքային պարտավորությունները: Նման մոտեցումը հնարավորություն է տվել առանձնացնելու առավել կարևոր հիմնախնդրային ոլորտները, ներկայացնելու իրավիճակը դե յուրե և դե ֆակտո և կենտրոնանալու բացասական գործելակերպի հաղթահարմանն ուղղված երաշխավորությունների վրա:

Առանցքային հիմնախնդիրներն ընտրելիս փորձագետների խումբը հաշվի է առել Կոնվենցիայի կոմիտեի դիտողությունները և հանձնարարականները ՀՀ կառավարության նախորդ հաշվետվությունների առնչությամբ, ինչպես նաև հիմնվել է հաշվետու ժամանակաշրջանում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից անցկացված մի շարք հետազոտությունների արդյունքների վրա:

1 INTERNATIONAL WOMEN'S RIGHTS ACTION WATCH կազմակերպության երաշխավորությունները այլընտրանքային զեկույցների նախապատրաստման վերաբերյալ:



Կոնվենցիայի կոմիտեի հանձնարարականների տեսանկյունից ըստ հոդվածների վերլուծության են ենթարկվել հետևյալ առանցքային հիմնախնդիրները.

- *Հայաստանում գենդերային հավասարության իրավական հիմքերը և իրական գործելակերպը,*
- *ազգային մեխանիզմի ստեղծման հիմնախնդիրը,*
- *պոզիտիվ խտրականության կիրառման հնարավորությունները,*
- *գենդերային կարծրատիպերի հաղթահարման հիմնախնդիրը,*
- *թրաֆիկինգ, կանանց առևտուր,*
- *կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը,*
- *խտրական գործելակերպը կրթության և առողջապահության ոլորտներում,*
- *կանանց զբաղվածությունը, խտրականությունը աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում,*
- *գյուղի կանանց հիմնախնդիրները:*

Ընդամին առավել մանրամասն վերլուծություն է արվել երկու համակարգաստեղծ հիմնախնդիրների վերաբերյալ՝ ազգային մեխանիզմի՝ որպես Կոնվենցիայի իրագործման վերահսկողության իրականացման և պետական քաղաքականության մեջ գենդերային չափման ներդրման անհրաժեշտ և պարտադիր պայմանի, և կանանց քաղաքական մասնակցության՝ որպես իշխանության մեջ, քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանանց անբավարար ներկայացվածության հիմնախնդրի, ինչը նվազագույնի է հասցնում կանանց՝ պետական քաղաքականության վրա ազդելու հնարավորությունները և հանգեցնում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում խտրական գործելակերպի ամրապնդմանը:

Ջեկույցը կազմելիս փորձագետներն օգտագործել են հաշվետու ժամանակաշրջանում (2002-2007 թթ.) Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոնի և Ժողովրդավարության և խաղաղության կենտրոնի կողմից անցկացված մի շարք հետազոտությունների և սոցիոլոգիական հարցումների նյութերն ու տվյալները, որոնց անցկացման ու վերլուծության անմիջական մասնակիցն են եղել: Դրանք են.

- Սոցիոլոգիական հարցումները նվիրված են եղել *քաղաքացիական հասարակության մասնակցությանը խորհրդարանական ընտրություններին, գենդերային կարծրատիպերին և էլեկտորալ վարքագծի հիմնախնդիրներին*², *հայ հասարակության ժողովրդավարացման գենդերային հեռանկարներին*³, *քաղաքացիական հասարակության*

2 *Ընտրական ժողովրդավարություն. ունի՞ արդյոք Հայաստանը այրնտրանք (սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ) / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2003:*

3 *Հայ հասարակության ժողովրդավարացումը. իրողություններ և միտումներ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2004:*



գործունի ընտրությունների ժողովրդավարացման խնդրում⁴, «Քաղաքական մասնակցության գեներային հավասարության չափմանը անցումային շրջանի հասարակությունում⁵»:

• Հետազոտություններ. «Գեներային իրավիճակը Հայաստանում. փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը հազարամյակի նպատակների համատեքստում»⁶, «Հայաստանի Հանրապետությունում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի և Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ»⁷:

Փորձագետները օգտվել են նաև Ազգային վիճակագրական ծառայության, Քաղաքացիական ծառայության խորհրդի տվյալներից և նույն ժամանակաշրջանում միջազգային կազմակերպությունների և հանրապետության այլ հասարակական կազմակերպությունների անցկացրած մի շարք հատուկ հետազոտությունների և սոցիոլոգիական հարցումների արդյունքներից, այդ թվում՝ «Կանանց նկատմամբ բռնությունը Հայաստանում» (Կանանց իրավունքների կենտրոն)⁸, «Բռնությունը ընտանիքում» («Ակունք» էթնո-սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոն)⁹, «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում» (Հայաստանում հասարակական սեկտորի հզորացման ծրագիր/Համաշխարհային ուսուցում)¹⁰, «Հայաստանում քաղաքացիների իրավական իրազեկությունը և մասնակցությունը» (IFES)¹¹, «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում գեներային բաղադրիչը ներառելու անհրաժեշտությունը և հիմնական ոլորտները», LSP¹², «Կանանց կարծիքը ՉԼՍ-ներում» (ԱՊՀ 8 երկրների մամուլի մոնիտորինգի արդյունքները, «Կավկասիա» կոալիցիա)¹³:

4 **Выборы и демократия: фактор гражданского общества** / Ассоциация женщин с университетским образованием. Ереван, 2003.

5 **Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. գեներային հավասարության չափումը** / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2006:

6 **Գեներային իրավիճակը Հայաստանում. փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը հազարամյակի նպատակների համատեքստում** / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2005:

7 **Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի և Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ** / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2006:

8 **Կանանց նկատմամբ բռնությունը Հայաստանում** / Կանանց իրավունքների կենտրոն: Երևան, 2001:

9 **Բռնությունը ընտանիքում** / «Ակունք» էթնո-սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոն: Երևան, 2002:

10 **Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում** / ՀԿ հզորացման ծրագիր/Համաշխարհային ուսուցում, Հայաստան: Երևան, 2002:

11 **Հայաստանում քաղաքացիների իրավական իրազեկությունը և մասնակցությունը** / IFES: Երևան, 2004:

12 **Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում գեներային բաղադրիչը ներառելու անհրաժեշտությունը և հիմնական ոլորտները** / LSP: Երևան, 2005:

13 **Женское мнение в СМИ, материалы мониторинга национальных газет в странах Южного Кавказа и Центральной Азии** / Коалиция “Кавказия”. Тбилиси, 2005.



Երկրի համառոտ բնութագիրը

Պաշտոնական անվանումը. Հայաստանի Հանրապետություն:

Տարածքը. 29,74 հազար քառ.կմ:

Բնակչությունը. 3,2 մլն մարդ (համաձայն 2001 թ. մարդահամարի), որոնց 64,1%-ը բնակվում է քաղաքներում, 35,9%-ը՝ գյուղական բնակավայրերում:

Էթնիկական կազմը. հայեր - 96%: Ազգային փոքրամասնությունները՝ ռուսներ, եզդիներ, բրդեր, ասորիներ, հույներ, ուկրաինացիներ, հրեաներ և այլն:

Մայրաքաղաքը. քաղաք Երևան:

Երկրում սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական իրավիճակը թելադրված է 1991 թվականին անկախության հռչակումից հետո սկսված փոխակերպման գործընթացներով: Անցումը ազատ շուկայական հարաբերությունների, ազատական բարեփոխումները և ժողովրդավարական վերափոխումները իրականացվել են քաղաքական-տնտեսական արտակարգ պայմաններում՝ պայմանավորված Ղարաբաղյան հակամարտության չկարգավորվածությամբ և մինչև այժմ շարունակվող տրանսպորտային շրջափակմամբ, որոնց հետևանքն էին բնակչության աղքատացումը, ծնելիության կտրուկ անկումը, ուղեղների արտահոսքը, փախստականների առկայությունը և այլ բացասական երևույթներ: Գործազրկությունը, ծանր տնտեսական պայմանները, որոնք ավելի խորացան դաժան էներգետիկ ճգնաժամի հետևանքով, առաջին հերթին անդրադարձան կանանց վրա:

Չարգացման ներկա փուլը բնութագրվում է ճգնաժամային երևույթների հաղթահարմամբ, կայունացած մակրոտնտեսական ցուցանիշներով և անցումով կայունացումից դեպի զարգացում, դեպի երկրի մրցունակության ապահովման և քաղաքացիների կյանքի որակի բարձրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: Վերջին վեց տարվա ընթացքում ՀՆԱ-ի տարեկան աճը կազմել է միջինը 12,2%, ընդամենը ՀՆԱ-ի 80%-ը բաժին է ընկնում մասնավոր սեկտորին: Եթե 1999 թվականին բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 485 ԱՄՆ դոլար, ապա 2007 թվականին այդ ցուցանիշը հասել է մինչև 2100 ԱՄՆ դոլարի: Եթե 1999 թվականին Հայաստանի բնակչության 56%-ը գտնվում էր աղքատության գծից ցածր, ապա 2005 թվականին ՀՀ կառավարության ընդունած Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում ձեռնարկված միջոցառումներից հետո աղքատության մակարդակը Հայաստանում իջել է մինչև 39%, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 7,2%: Դրա հետ մեկտեղ երկրում սոցիալական բևեռացման բարձր աստիճանը, ստվերային տնտեսության բարձր տեսակարար կշիռը, ազգային տարադրամի փոխարժեքի տատանումները, կոռուպցիան լուրջ խոչընդոտներ են Հայաստանի հետագա զարգացման ճանապարհին: Երկրում նվազագույն աշխատավարձը կազմում է 20 հազար դրամ (մոտ 50 ԱՄՆ դոլար), միջին կենսաթոշակը՝ 12 հազար դրամ (30 ԱՄՆ դոլար), այն դեպքում, երբ նվազագույն սպառողական զամբյուղը կազմում է 30 հազար դրամ:



Վերջին տարիները բնութագրվում են մի շարք կարևոր քաղաքական-տնտեսական իրադարձություններով, որոնք կանխորոշել են երկրի հետագա զարգացման վեկտորը: 2001 թվականին Հայաստանը անդամակցեց Եվրոպայի խորհրդին, 2003 թվականին դարձավ ԱՀԿ-ի անդամ, 2006 թվականի նոյեմբերին եվրոպական «նոր հարևանության քաղաքականության» շրջանակներում ստորագրեց Հայաստան-ԵԽ գործողությունների պլանը: Համաձայն Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությունների՝ երկրի օրենսդրությունը բարեփոխվում է այն եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու համար: 2003 թվականին ընդունվել է նոր Քրեական օրենսգիրքը, 2004 թվականին՝ նոր Աշխատանքային օրենսգիրքը: 2005 թվականին անցկացված հանրաքվեով ՀՀ Սահմանադրությունում կատարվեցին փոփոխություններ, որոնք էապես ընդլայնեցին մարդու իրավունքները:

Ըստ մարդկային զարգացման համաթվի (HDI)՝ Հայաստանն այսօր աշխարհի երկրների շարքում զբաղեցնում է 80-րդ տեղը (ՄԱԿ-ի մարդկային զարգացման 2006 թվականի զեկույց): Գեներալային գործոնի հաշվառմամբ զարգացման համաթիվը (GDI) HDI-ի նկատմամբ, ի հաշիվ բնակչության դեռևս բարձր կրթական մակարդակի, կազմել է 99,6%, ինչը ընդհանուր առմամբ դրական է բնութագրում գեներալային իրավիճակը Հայաստանում, սակայն չի արտացոլում դրա իրական դրությունը:

Չեկույցի ամփոփ նկարագիրը

Անցումային շրջանը՝ իր դժվար լուծելի սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրներով, առանձնապես բացասաբար անդրադարձավ կանանց վրա: Հայաստանում ազատական-ժողովրդավարական բարեփոխումների իրականացման ընթացքում խտրական գործելակերպի հաղթահարմանն ու կանանց առաջնորդման համար բարենպաստ պայմանների ստեղծմանն ուղղված անհրաժեշտ և ճիշտ ժամանակին գործադրվող միջոցներ չեն ձեռնարկվել, դա հանգեցրել է վառ արտահայտված գեներալային անհավասարակշռության և աշխատանքի շուկայում, քաղաքականության մեջ, որոշումների ընդունման մակարդակում կանանց իրավունքների խախտման: Հասարակական կարգի կտրուկ փոփոխության սոցիալական հետևանքները՝ ձեռնարկությունների զանգվածային լուծարումը և արդյունքում գործազրկությունն ու աղքատությունը, որոնք «կանացի դեմք» ստացան, ինչպես նաև տնտեսապես առավել ակտիվ տղամարդկանց արտագաղթը կնոջը դրեցին սոցիալ-տնտեսական նոր պայմանների մեջ:

Այս նոր իրողությունները պահանջում են ոչ միայն լրացուցիչ գիտելիքներ և հմտություններ, այլև պետության հատուկ միջոցառումներ, որոնք կնպաստեին կանանց ներդաշնակ հարմարմանը շուկայական պայմաններին և ընդգրկմանը պետության կառավարման գործընթացներում: Իրավիճակը բարդանում է հասարակության մեջ կայունա-



ցած և բավական կենսունակ կարծրատիպերով, որոնք խոչընդոտում են կանանց հասարակական և քաղաքական ակտիվությունը:

Հայաստանի գենդերային իրավիճակը գնահատելիս անհրաժեշտ է նշել, որ հանրապետության հասարակական և պետական ինստիտուտների գործունեությունը չի կարող գենդերայնորեն զգայուն համարվել և չի բացառում կանանց նկատմամբ խտրականությունը: Չնայած բարձր կրթական և քաղաքացիական ներուժին՝ կանանց դերը քաղաքականության, տնտեսության մեջ և հասարակական կյանքում բավական սահմանափակ է: Կանայք, որպես կանոն, փոքրաթիվ են հասարակական-քաղաքական գործընթացներում: Կանանց օտարումը կառավարման համակարգի որոշումների ընդունման մակարդակից և դեկավարման այրական ոճը հանգեցնում են ժողովրդավարության ճեղքվածքի և հակասում են ներկայացուցչական ժողովրդավարության հիմնական սկզբունքներին:

Հավասար իրավունքների ապահովման ոլորտում հիմնական խնդիրը շարունակում է մնալ **կանանց համար հավասար հնարավորությունների բացակայությունը**: Մեռերի իրավահավասարության սկզբունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում և արտացոլված է ազգային օրենսդրությունում: ՀՀ Սահմանադրության՝ 2005 թվականին ընդունված փոփոխություններում այն ձևակերպված է որպես մի շարք հատկանիշներով, այդ թվում նաև սեռի հատկանիշով խտրականության արգելք: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, ինչպես և Հայաստանի վավերացրած այլ միջազգային իրավական փաստաթղթեր, գերակա ուժ ունի ազգային օրենսդրության համեմատ: Սակայն *դե յուրե* ամրագրված սահմանադրական իրավունքները չեն բացառում *դե ֆակտո* խտրական գործելակերպը: Իրական կյանքում խտրական գործելակերպի հիմքում ընկած են¹⁴.

- տղամարդկանց և կանանց անհավասար դրությունը տնտեսական ոլորտում,
- հասարակությունում և ընտանիքում գենդերային դերերի ավանդական բաշխումը, որը պահպանվում և ամրապնդվում է հասարակական բոլոր ինստիտուտների կողմից,
- որոշումների ընդունման մակարդակի քաղաքական պաշտոնների և պետական իշխանության մարմինների ոչ հավասար մատչելիությունը տղամարդկանց և կանանց համար:

Գեռեսս չի ձևավորվել խորհրդարանական մեծամասնության՝ «Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների և կանանց ու տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» օրենքը նախաձեռնելու և ընդունելու քաղաքական կամքը:

14 *Գենդերային իրավիճակը Հայաստանում. փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը հազարամյակի նպատակների համատեքստում* / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2005:



Խտրական գործելակերպը հաղթահարելու և Հայաստանի վավերացրած միջազգային փաստաթղթերի, այդ թվում Կոնվենցիայի բովանդակած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 2004 թվականի ապրիլի 8-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը»: Դրանում արժարժված հիմնախնդիրների ձևակերպումը և դրանց հաղթահարմանն ուղղված ռազմավարությունները համապատասխանում են միջազգային փաստաթղթերի հանձնարարականներին, բայց չեն ներառում դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցների, կազմակերպչական և ֆինանսական ռեսուրսների ողջ համալիրը: Միջոցառումների մեծ մասը երկարաժամկետ բնույթ ունի, ընդ որում դրանց իրականացումը պետք է սկսվեր 2004-2005 թվականներից ոչ ուշ: Որոշ միջոցառումներ, ինչպես օրինակ՝ իրավական ակտերի կատարման վերահսկողությունը, պարբերական բնույթ ունեն, միջոցառումների մի մասն էլ նախատեսված է իրականացնել անհապաղ կամ բավական սեղմ ժամկետներում: Սակայն ազգային մեխանիզմի՝ որպես միասնական համադասող մարմնի, բացակայությունը, կազմակերպչական թույլ միջոցները, անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, քաղաքական վերնախավի ոչ բավարար պատրաստակամությունը Ազգային ծրագրի իրականացման համար նվազեցնում են դրա արդյունավետությունը:

Կառավարող կադրերի պատրաստման համակարգում և բոլոր մակարդակների պետպաշտոնյաների շրջանում գենդերային կրթության բացակայությունը կասկածի տակ է դնում նրանց՝ գենդերային անհավասարակշռությունը հաղթահարելու անհրաժեշտության գիտակցումը: Փորձագետների գնահատման համաձայն՝ Հայաստանի իշխանական կառույցների պատրաստակամությունը միջազգային պարտավորությունների և Կանանց վիճակի բարելավման և հասարակությունում նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի իրականացման խնդրում տվյալ փուլում սահմանափակվում է սոսկ հասարակության մեջ կանանց դրական դերի և նրանց կարգավիճակի բարձրացման անհրաժեշտության գիտակցմամբ¹⁵:

ՀՀ կառավարության կողմից ներկայացված նախորդ երկու հաշվետվությունների կապակցությամբ Կոնվենցիայի կոմիտեի հանձնարարականների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում ներառված խնդիրների լուծման համար ՀՀ կառավարությունը պետք է ապահովվի.

- ձեռնարկվող միջոցների նպատակաուղղված և երկարաժամկետ բնույթը,
- այդ հիմնախնդիրների լուծման գործում քաղաքացիական հասարակության ինստի-

15 Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի և Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ / Համալսարանական կրթությամբ կանանց ստոյիցիա: Երևան, 2006:



տուտների՝ հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների, ՁԼՄ-ների ակտիվ ներգրավումը,

- կանանց վիճակի բարելավման, պետական գեներային քաղաքականության մշակման և կանանց նկատմամբ հակախտրական միջոցների իրականացման նպատակով արդյունավետ ազգային մեխանիզմի ստեղծումը:

Կոնվենցիայի դրույթների իրագործումը նախ և առաջ խոչընդոտում է **ազգային մեխանիզմի** բացակայությունը: Նման մեխանիզմի առկայությունը հնարավորություն կտա *դեֆակտո* իրավիճակը համապատասխանեցնելու *դե յուրե* ամրագրվածին: Առանց ազգային մեխանիզմի իրոք անհնար է գեներային բացառիչը ներառել օրենսդրության, պետական քաղաքականության, ազգային ծրագրերի և նախագծերի մեջ¹⁶, ինչը անհրաժեշտ նախադրյալ է կանանց նկատմամբ խտրականությունը հաղթահարելու և հայ հասարակությունում գեներային հավասարության հասնելու համար: Բարձր կարգավիճակ ունեցող միասնական մեխանիզմի ստեղծումը անհրաժեշտ է նաև Կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրի իրագործմանն օժանդակելու, այդ թվում նաև ծրագրի իրականացմանը կոչված հիմնական գործող անձանց խորհրդատվություն տրամադրելու, մոնիտորինգի և երկրում գեներային իրավիճակին հետևելու ու այն գնահատելու գործիք ստեղծելու համար: Ազգային մեխանիզմ ստեղծելու նախկինում ձեռնարկված փորձերը պահանջով մակարդակի, հատակ մանդատի և համապատասխան իրավասություններով ամրապնդված որոշակի գործառույթների, ինչպես նաև անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների բացակայության հետևանքով ցանկալի արդյունք չեն տվել:

Կանանց նկատմամբ խտրականության առավել ցայտուն դրսևորումը **կանանց ոչ բավարար ներկայացվածությունն է քաղաքական և տնտեսական ոլորտների որոշումների ընդունման** մակարդակում: Նախորդ զեկույցի ներկայացումից հետո ընկած ժամանակահատվածում շարունակվել է իշխանության ապաֆեմինացման գործընթացը, որը պայմանավորված է քաղաքական մշակույթի հայրիշխանական-ամբողջատիրական ավանդույթների, գեներային կարծրատիպերի և փոխակերպման գործընթացների հետևանքներով: Պետական քաղաքականության ոլորտից կանանց դուրսմղման գործընթացը վերաբերում է թե՛ ընտրովի պաշտոններին, թե՛ գործադիր իշխանության ղեկավար կազմին: Այսպիսով, կանանց քաղաքական կարգավիճակը, որը որոշվում է իրական ազդեցություն և իշխանություն ունենալու աստիճանով, անցած տարիների ընթացքում փոփոխություններ չի կրել, կանայք օտարված են քաղաքական որոշումների ընդունման գործընթացներից:

Որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության աստիճանով Հայաստանի Հանրապետությունը զգալիորեն հետ է մնում համաշխարհային ցուցանիշներից, ինչը խոսում է հանրապետության կառավարման համակարգում մարդկային ռե-

16 Պեկինյան գործողությունների ծրագիր (կետ 202):



սուրսների բացարձակ անարդյունավետ օգտագործման մասին: Առավելապես տղամարդկանցով ներկայացված կառավարչական բուրգը չի արտացոլում հասարակական ուժերի իրական գենդերային հաշվեկշիռը, արգելակում է հասարակության ժողովրդավարացման գործընթացները, խոչընդոտում Հայաստանի լիարժեք ներգրավումը եվրոպական և գենդերային հավասարության քաղաքականություն իրականացնող այլ միջազգային կառույցների մեջ:

ՀՀ Սահմանադրությամբ երկու սեռերի անձանց համար նախատեսված հավասար իրավունքը՝ զբաղեցնել ցանկացած պաշտոն պետական և հանրային ծառայության համակարգերում, իրականում բավարար չեղավ դեկավար պաշտոններում տղամարդկանց և կանանց ներկայացվածության փաստացի անհավասարությունը հաղթահարելու համար: Հանրապետությունում երկու սեռերի անձանց համար հավասար հնարավորություններ երաշխավորող հատուկ օրենսդրական ակտեր չեն ընդունվել: Կանանց վիճակի բարելավման ազգային ծրագիրը չի նախատեսում իշխանության համակարգում գենդերային անհավասարակշռության հաղթահարմանն ուղղված հատուկ միջոցների և տեխնոլոգիաների կիրառում, որոնք հաջողությամբ են փորձարկվել զարգացած շատ երկրներում: Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունը կուսակցական ընտրացուցակներում կանանց համար 15-տոկոսանոց համամասնական ներկայացվածության ժամանակավոր գենդերային քվոտաների մասին սուկ արձանագրում է արդեն նվաճված սահմանագիծը և չի կարող էական ազդեցություն ունենալ օրենսդիր իշխանության մակարդակում՝ պատգամավորական կազմում կանանց թվաքանակի ավելացման վրա:

Հանրապետությունում գոյություն չունի **գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն** ուղղված հատուկ քարոզարշավների անցկացման գործելակերպ, որոնք լուրջ խոչընդոտ են կանանց հասարակական-քաղաքական ակտիվության ընդլայնման ճանապարհին: Գործնականում բացակայում է ՀԿ-ների, իշխանական կառույցների և ՁԼՄ-ների գործընկերությունը՝ գենդերային կարծրատիպերը հաղթահարելու համար հասարակական գիտակցության վրա ներազդելու նպատակով: Մտահոգություն է առաջացնում այն հանգամանքը, որ զանգվածային լրատվության միջոցները, լինելով ժողովրդավարության մշակույթի տարածողներ, իրենք իսկ շահագրգռություն չեն դրսևորում գենդերային հավասարության գաղափարի առաջնդման և կանանց նկատմամբ խտրական գործելակերպի հաղթահարման հարցում: Կանանց հասարակական սեկտորի և ՁԼՄ-ների շահերը շփման եզրեր չեն գտնում, և կանանց խնդիրների լուսաբանումը ՁԼՄ-ների առաջնահերթություններից դուրս է մնում, իսկ գենդերային խնդիրներն արծարծող առանձին լրագրողների աշխատանքը հաճախ ըմբռնումով չի ընդունվում, նրանց նյութերի հրապարակումը ուղեկցվում է մի շարք դժվարություններով: Գենդերային իրավահավասարության հարցերն այսօր մնում են սուկ կանանց կազմակերպությունների առանձնաշնորհը, որոնց գործունեությունը և ջանքերը ՁԼՄ-ների կողմից աջակցության բացակայության պատճառով լայն հասարակայնության սեփականությունը չեն դառնում:



Հանրապետության պետական մարմինները խտրականության դրսևորումներին հետևելու գործելակերպ չեն որդեգրում՝ դրանք ժամանակին չեզոքացնելու համար: Հսկողություն չի իրականացվում նաև որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության միտումներին հետևելու համար: Ազգային վիճակագրական ծառայությունը 1999 թվականից միջազգային հիմնադրամների աջակցությամբ իրականացնում է «Հայաստանի կանայք և տղամարդիկ» ժողովածուների պարբերական հրատարակումը: Այդուհանդերձ հանրապետությունում ըստ սեռի տարաբաժանված վիճակագրական տվյալների հավաքման, մշակման և հրապարակման միասնական համակարգ գոյություն չունի, ՄԱԿ-ի գործելակերպում ընդունված **կանանց հնարավորությունների ընդլայնման** ցուցանիշի¹⁷ հաշվարկ չի կատարվում: Հասարակության գեներային իրավիճակն արտացոլող միջազգային ցուցանիշներից Հայաստանում հաշվարկվում է միայն **գարգացման համաթիվը՝ գեներային գործոնի** հաշվառմամբ¹⁸, ըստ որի՝ Հայաստանը 136 երկրների շարքում զբաղեցնում է 65-րդ տեղը¹⁹: Անկասկած, մեկ քայլ առաջ կարելի է համարել վերջերս Ազգային վիճակագրական ծառայության իրականացրած զբաղվածության ժամանակի ընտրանքային հետազոտությունը, որը հնարավորություն տվեց հաշվարկելու կանանց կրկնակի զբաղվածությունը: Ստացված արդյունքներն առանձնապես կարևոր են կանանց՝ ընտանեկան պարտականությունները մասնագիտական աճի և հասարակական-քաղաքական գործունեության հետ համատեղելու հնարավորությունների տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրությունում և աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող այլ օրենսդրական ակտերում չկան այնպիսի դրույթներ, որոնք կարելի է որակել խտրական կանանց նկատմամբ կամ նրանց իրավունքները խախտող, սակայն ՀՀ օրենսդրական բազան և ՀՀ կառավարության քաղաքականությունը **աշխատանքային շուկայում տղամարդկանց և կանանց հավասար** հնարավորությունների երաշխիքներ չեն բովանդակում: Գեներային իրավիճակը աշխատանքային շուկայում բնութագրվում է կանանց նկատմամբ թաքնված խտրականության դրսևորումներով, մասնավորապես զբաղվածության ոլորտում հորիզոնական և ուղղահայաց խտրազատության ձևով: Ինչպես վկայում են ուսումնասիրությունները²⁰, կառավարությունն իր տնտեսական քաղաքականության մեջ չի մշակում գործնական մեթոդիկաներ, որոնք հնարավորություն կտային տնտեսական քաղաքականությունը ձևավորելիս հաշվի առնելու գեներային հիմնախնդիրները, մակրո- և միկրոտնտեսական քաղաքականությունը մշակելիս չի օգտագործում գեներա-

17 Gender empowerment measure (GEM) – քաղաքացիական ցուցանիշ է, որը չափում է գեներային անհավասարությունը ըստ երեք հիմնական ուղղությունների. մասնակցություն տնտեսական կյանքին և որոշումների ընդունմանը, տնտեսական ռեսուրսների վերահսկում:

18 Gender-related development index (GDI)- գարգացման համաթիվը՝ գեներային գործոնի հաշվառմամբ:

19 Доклад о развитии человека 2006 “Что кроется за нехваткой воды: власть, бедность и глобальный кризис водных ресурсов”, Нью-Йорк, ПРООН, 2006 г.

20 Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի և Հազարամյակի գարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ / Համալսարանական կրթությամբ կանանց ստացիացիա: Երևան, 2006, էջ 63:



յին վերլուծության մեթոդը, չի իրականացնում վարձու աշխատանք կատարող և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող կանանց յուրահատուկ պահանջմունքների և շահերի համալիր ներառում նախատեսող ռազմավարությունների վերլուծություն, համադասում և իրագործում, չի ստեղծում կանանց գլխավորած ձեռնարկությունների համար օժանդակ ծառայությունների համակարգ, այդ թվում ներդրումային հիմնադրամներ:

Հիմնական ընդհանուր պարտադիր և անվճար կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի իրականացման առումով ըստ սեռի հատկանիշի խտրականություն չի նկատվում: Երկրի մեծահասակ բնակչության գրագիտության մակարդակը կազմում է 99,5%: Բարձրագույն կրթություն ունեցողների թվում կանայք կազմում են 58%:

2005-2006 ուսումնական տարում աղջիկները կազմել են պետական հանրակրթական դպրոցների սովորողների ընդհանուր թվի 49,2%-ը, ինչը համապատասխանում է նրանց տեսակարար կշռին տարիքային խմբերի կազմում: Հաշվետու ժամանակաշրջանում մեծացել է աղջիկների ընդգրկվածությունը միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգում՝ 2004-2005 ուսումնական տարում պետական բուհերում հասնելով 52,2%-ի, ոչ պետական բուհերում՝ 67,8%-ի: Միջին մասնագիտական համակարգում աղջիկները կազմում են 67,9% պետական և 81,4%՝ ոչ պետական հաստատություններում:

Երկարաժամկետ հեռանկարում մի շարք ցուցանիշների անկման վտանգ կա, ինչը կապված է պարտադիր հիմնական կրթության մակարդակի անկման և անվճար ձևերի կրճատման հաշվին կրթական ծառայությունների վճարովի ձևերի տեսակարար կշռի մեծացման հետ: Տեղի է ունենում երեխաների, հատկապես աղջիկների մաղում տարրական դպրոցից (մոտավորապես 8% հանրապետությունում և 11-13,5% ըստ առանձին տարածաշրջանների), ինչը անգրագիտության և դրա հետևանքով աղքատության աճի հող է ստեղծում:

Շրջանավարտներին աշխատատեղերով ապահովելու միասնական պետական քաղաքականության բացակայության և աշխատանքի շուկայի իրական պահանջարկի ու բուհերի պատրաստած մասնագետների թվի անհամապատասխանության պայմաններում իրական վտանգ կա, որ բուհն ավարտած աղջիկները կմնան առանց աշխատանքի կամ իրենց մասնագիտությամբ աշխատանք չեն գտնի: Կրթության համակարգի աշխատողների մոտ 80%-ը կազմող կանայք գործնականում ներկայացված չեն համակարգի կառավարման մակարդակում, հետևաբար կրթական քաղաքականության և ռազմավարության մշակմանը իրապես մասնակցելու հնարավորություններ չունեն:

Առողջապահական համակարգի բարեփոխումները, որոնք իրականացվել են առանց նախապատրաստական աշխատանքների, ճյուղի անցումը վճարովի ծառայությունների մատուցման հանգեցրել են Հայաստանի բնակչության մեծ մասի համար բժշկական ծառայությունների մատչելիության կտրուկ նվազման և առողջության ցուցանիշների վատթարացման: Նվազել է բժշկական հաստատությունների հաճախելիությունը: Իրա-



վիճակն արմատապես փոխվեց 2006 թվականի հունվարից, երբ ամբուլատոր-պոլիկլինիկական ամբողջ համակարգն անցավ անվճար ծառայությունների մատուցման, և մեծացավ բժշկական հաստատությունների հաճախելիության թիվը: Սակայն անվճար բժշկական ծառայությունների ոլորտը սահմանափակ է, և թանկության ու բնակչության անվճարունակության պատճառով որակյալ բժշկական ծառայությունները ընդհանուր առմամբ դեռևս մատչելի չեն կանանց մեծ մասի համար: Առողջապահության ոլորտի հիմնախնդիրների թվում են կանանց չարորակ հիվանդությունների ուշ ախտորոշումը՝ բժիշկներին ուշ դիմելու հետևանքով, կանանց ոչ բավարար իրազեկությունը իրենց առողջության և վերարտադրողական իրավունքների մասին, ինչպես նաև կանանց առողջության բարելվանն ուղղված կանխարգելման ծրագրերի պակասը:

Բնութագրելով Հայաստանում Կոնվենցիայի կատարման իրավիճակը՝ հարկ է նշել, որ, չնայած հանրապետության օրենսդրությամբ կանանց բավական լայն իրավունքների ամրագրմանը, իրականում գոյություն ունի խտրականություն, որը հաճախ չի ընկալվում որպես այդպիսին հասարակությունում կնոջ դերի մասին արմատավորված կարծրատիպային պատկերացումների պատճառով: ՀՀ կառավարության կողմից կանանց նկատմամբ խտրականության կանխարգելման արդյունավետ եղանակներ չեն կիրառվում թե՛ աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում, թե՛ պետական կառավարման ոլորտի որոշումների ընդունման մակարդակում: Հետևանքն այն է, որ շարունակում է նվազել կանանց ազդեցությունը հասարակական և տնտեսական գործընթացների, պետական քաղաքականության վրա: Քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանանց ցածր ներկայացվածությունը տնտեսական և հասարակական-քաղաքական ոլորտներում նրանց նկատմամբ խտրականության հետևանք է:

Միջազգային հանրության մասը հանդիսանալով և մի շարք միջազգային փաստաթղթերով գենդերային հավասարության հաստատմանն ուղղված պարտավորություններ ստանձնելով՝ Հայաստանի Հանրապետությունը որոշակի քայլեր է ձեռնարկել դրանցում նախանշված մոտեցումների իրականացման ուղղությամբ: Սակայն կանանց նկատմամբ խտրական գործելակերպի վերացման և հասարակական կյանքի ընդհանուր համատեքստում և պետական քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի ներդրման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները ցանկալի արդյունք չեն տվել, իրավիճակը դեռևս համարժեք չէ ժողովրդավարական վերափոխումների գործընթացներին և ժամանակի մարտահրավերներին:

Զեկույցի պատրաստման ընթացքում հեղինակները հիմնվել են կանանց հասարակական սեկտորի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների կարծիքների վրա: Աշխատանքի վերջին փուլում զեկույցի բովանդակությունը քննարկվել է հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, հաշվի են առնվել դիտողություններն ու առաջարկությունները:



ՄԱՍ 1

Առանցքային հիմնախնդիրների վերլուծությունն՝ ըստ հոդվածների

Հոդված 1.

«Խտրականություն» հասկացությունը

Հիմնախնդիրները.

- «Կանանց խտրականություն» եզրույթի՝ Կոնվենցիայի սահմանմանը համապատասխանող հասկացողության բացակայությունը:
- Կոնվենցիայի մասին բնակչության լայն խավերի ցածր իրազեկությունը:

Թեև հանրապետության օրենսդրությունում Կոնվենցիայի մի շարք դրույթներ արտացոլված են, «կանանց խտրականություն» հասկացությունն ամրագրված չէ: Կառավարությունը փաստորեն չի կատարել Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականը Հայաստանում 1997 թ. և 2002 թ. Եզրափակիչ հանձնարարականների²¹ տեքստերը տարածելու մասին: Հասարակայնությունը տեղեկացված չէ նաև իր իրավունքների պաշտպանության լրացուցիչ հնարավորությունների մասին, որոնք ընձեռնվում են Կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ:

Հասարակական կարծիքի հարցումները վկայում են, որ հասարակայնության լայն շերտերը, հաճախ նաև պետական պաշտոնյաները չեն ընդունում կանանց խտրականության առկայությունը, և, որպես կանոն, այն չի գիտակցվում նույնիսկ կանանց կողմից: Բարձրագույն կրթություն և կենսական ակտիվ դիրքորոշում ունեցող հարցվողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումները²² ցույց են տալիս, որ բնակչության այս շերտը քիչ թե շատ ընդունում է կանանց խտրականության առկայությունը: Այ-

21 CEDAW A/ 52 / 38 / rev. 1 (1997), կետ 68, CEDAW A/ 57 / 38 / part III (2002), կետ 69:

22 Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. գեներային հավասարության չափումը / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան 2006:



դուհանդերձ անգամ հարցվողների այս խմբում միջազգային փաստաթղթերի, այդ թվում և Կոնվենցիայի մասին իրազեկությունը կազմում է ընդամենը 1,8%:

Ըստ փորձագետների գնահատականների²³ խտրականությունը չգիտակցելու հիմնախնդիրը հասարակության իրավական մշակույթի ոչ բավարար մակարդակի հետևանք է: Քաղաքացիների իրավական իրազեկությունը, ներառյալ իրազեկությունը միջազգային փաստաթղթերի բովանդակության մասին, հիմնականում իրականացվում է կանանց և իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ջանքերով, որոնք աշխատանք են տանում կանանց իրավունքների մասին միջազգային փաստաթղթերի մայրենի լեզվով թարգմանության և տարածման ուղղությամբ, իրականացնում կանանց իրավական իրազեկության ընդլայնմանն ուղղված լուսավորական ծրագրեր:

Կանանց 39,7%-ը և տղամարդկանց 36%-ը համարում են²⁴, որ կինը հայ հասարակության լիիրավ անդամ չէ, և այդ անհավասարությունը տեսնում են՝

- քաղաքական ոլորտում. կանանց 40%-ը և տղամարդկանց 42%-ը,
- ընտանեկան ոլորտում. կանանց 22,6%-ը և տղամարդկանց 23%-ը,
- մասնագիտական ոլորտում. կանանց 23,3%-ը և տղամարդկանց 19%-ը,
- սոցիալական ոլորտում. կանանց 7,5%-ը և տղամարդկանց 8,5%-ը:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- ապահովել միջոցառումներ Կոնվենցիայի դրույթների և Կոնվենցիայի կոմիտեի հանձնարարականների մասին պաշտոնատար անձանց և պետական ծառայողների իրազեկության բարձրացման ուղղությամբ,
- ձեռնարկել միջոցառումներ բնակչության իրավական լուսավորության ուղղությամբ, մասնավորապես Հայաստանի վավերացրած միջազգային իրավական փաստաթղթերի վերաբերյալ,
- նպաստել կոնվենցիայի հիմնական դրույթները մեկնաբանող հանրամատչելի գրականության պատրաստմանը և հրատարակմանը,
- իրականացնել միջոցառումներ ՉԼՄ-ների միջոցով գենդերային իրավահավասարության հաստատման միջազգային պարտավորությունների լայն քարոզչության ուղղությամբ,
- նպաստել ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանը՝ ուղղված

23 Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի և Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Երևան, 2006:

24 Ընտրական Ժողովրդավարություն. ունի՞ արդյոք Հայաստանը այլընտրանք, սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2003, էջ 122:



կանանց իրավական գրագիտության բարձրացմանը և սեփական իրավունքները պաշտպանելու կարողության ձևավորմանը:

ՀՀ Ազգային ժողովին.

- կազմակերպել լայն քննարկումներ «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» շրջանակներում Կոնվենցիայի դրույթների իրականացման հիմնախնդիրների շուրջ,
- գործելակերպ դարձնել ՀՀ կառավարության պարբերական հաշվետվությունները կանանց իրավունքների և գեղեցիկ հավասարության վերաբերյալ Հայաստանի վավերացրած միջազգային համաձայնագրերի իրականացման մասին:

Հոդված 2

Պետության՝ խտրականության վերացման քաղաքականություն վարելու պարտավորությունները

Հիմնախնդիրները.

- Պետության կողմից կանանց նկատմամբ խտրական գործելակերպի հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցների անբավարարությունը:
- Էական տարբերությունը սեռերի հավասարություն երաշխավորող ամրագրված իրավական նորմերի և դրանց իրականացման միջև:
- Օրենսդրության գեղեցիկ փորձաքննության բացակայությունը:

Սեռերի իրավահավասարության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում և արտացոլված է ազգային օրենսդրությունում: 2005 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխություններում այն ձևակերպված է ըստ մի շարք հատկանիշների, այդ թվում նաև սեռի հատկանիշով **խտրականության** արգելման դրույթով²⁵:

Մի շարք հատկանիշներով, այդ թվում նաև սեռի հատկանիշով խտրական գործողությունների համար պատասխանատվություն է նախատեսվում ՀՀ Քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածով («Քաղաքացիների իրավահավասարության խախտում» հոդվածը «Հանցագործություններ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ» բաժնում). սահմանվում են տուգանքներ կամ ազատազրկում մինչև երկու տարի, իսկ պաշտոնատար անձանց համար՝ երկուսից-հինգ տարի ժամկետով: Սակայն քննչական և դատական պրակտիկայում կանանց իրավունքների խտրա-

25 Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 14.1, Երևան, 2005:



կանության վերաբերյալ գործեր չկան, այդ հարցում իրավական մշակույթ չի ձևավորվել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Կոնվենցիան, ի թիվս Հայաստանի վավերացրած միջազգային իրավական այլ փաստաթղթերի, գերակայություն ունի ազգային օրենսդրության նկատմամբ, սակայն դատական պրակտիկայում հանրապետության կանանց իրավունքների պաշտպանության նպատակով կոնվենցիայի դրույթները կիրառելու նախադեպեր չեն արձանագրվել:

Ըստ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների՝ հանրապետության քաղաքացիները դատական, ինչպես նաև այլ պետական մարմիններում արդյունավետ միջոցներով իրավական պաշտպանության իրավունքից բացի, ունեն Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

2006 թվականի մայիսի 23-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է **Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի Կամընտիր** արձանագրությունը, որը լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում ՀՀ քաղաքացիներին անդամ պետության կողմից Կոնվենցիայում ամրագրված իրավունքների խախտման մասին հաղորդագրություններ (**քողոքներ**) ներկայացնել անմիջապես Կոնվենցիայի կոմիտե:

Ի տարբերություն օրենսդրության, որը վերջին տարիներին համապատասխանեցվել է միջազգային չափորոշիչներին, երկրում իրականացվող քաղաքականությունը, գործելակերպը և ընթացակարգերը չեն վերանայվել կանանց մարդու իրավունքների ոլորտում համապատասխան միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով: Իրավաբանական նորմերում ամրագրված լայն իրավունքները տարբերվում են իրական գործելակերպից: Իրավունքների և հնարավորությունների անհամաչափությունը իրավահավասարության իրականացման ճանապարհին ընկած հիմնական խոչընդոտն է: ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և օրենքները հռչակում են տղամարդկանց և կանանց իրավահավասարություն, գործնականում, կանանց տրվող իրավունքների իրականացման հնարավորությունների առումով, կանանց նկատմամբ խտրականության հաղթահարման խնդիրը լուծված չէ:

2005 թվականին ՀՀ Սահմանադրությունում կատարված փոփոխությունները, ամրագրելով բոլորի համար հավասար իրավունքներ՝ անկախ սեռից, նույնպես չեն շեշտադրել տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման սկզբունքը, որն ամրագրված է շատ երկրների սահմանադրություններում:

Մ
Ա
Ս
1



Ըստ փորձագետների գնահատականների, հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրենքի բացակայության պայմաններում կանանց և տղամարդկանց փաստացի իրավահավասարության ապահովման միջոց կարող է ծառայել ՀՀ օրենսդրության գենդերային փորձաքննությունը²⁶: Սակայն ազգային օրենսդրությունը մշակվում է առանց նախնական գենդերային փորձաքննության և վերարտադրում է հասարակության մեջ արմատացած գենդերային կարծրատիպերը, դրանով իսկ չեն ապահովվում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերում նախատեսված կանանց իրավունքների լիարժեք ճանաչումը, պահպանումը և արդյունավետ պաշտպանությունը:

2004 թվականից Հայաստանում գործող **Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի)** ինստիտուտը զգալի աշխատանք է կատարում մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Մարդու իրավունքների **պաշտպանի** գործունեության մասին հաշվետվություններում բերվում են վիճակագրական տվյալներ այն քաղաքացիների մասին, ովքեր դիմել են այս համեմատաբար նոր կառույց՝ իրենց իրավունքները պաշտպանելու համար, ներկայացվում է ստացված դիմումների բավական մանրամասն վերլուծություն՝ ըստ ոլորտների և իրավունքների խախտման տեսակների: Սակայն հրապարակվող տվյալները պատկերացում չեն տալիս մարդու իրավունքների պաշտպանին դիմած մարդկանց սեռատարիքային կազմի մասին, բացակայում է գենդերային վիճակագրությունը:

Հայաստանում կանանց մարդու իրավունքների պահպանման ու պաշտպանության վերահսկողություն իրականացնող ինստիտուտ գոյություն չունի: Աշխատանք չի տարվում ընդունվող օրենքների դրույթների և տղամարդկանց ու կանանց համար դրանց հետևանքների պարզաբանման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի վավերացրել կանանց իսկ կողմից սեփական իրավունքների լիարժեք իրականացման համար այնպիսի կարևոր փաստաթուղթ, ինչպիսին է Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, թեպետ «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրում» ՀՀ արտաքին գործերի նախարարությանը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հանձնարարվել է նշված փաստաթուղթը վավերացման ներկայացնել 2004 թվականին:

Հայաստանում օրենսդրական գործունեության կատարելագործմանը ակտիվորեն աջակցում են հասարակական կազմակերպությունները: Նրանք իրականացնում են կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենքների ընդունման լոբբիստական

26 Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի և Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2006, էջ 93:



գործունեություն, ներկայացնում են իրենց առաջարկություններն ու դիտողություններն ընդունվող օրենքների վերաբերյալ, կազմակերպում են քննարկումներ խորհրդարանի անդամների մասնակցությամբ՝ կլոր սեղանների, համաժողովների ձևաչափով: Վերջին տարիներին ձևավորվել է խորհրդարանական լսումներին և ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում օրինագծերի քննարկումներին մասնակցելու համար շահագրգիռ իրավապաշտպան և կանանց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին հրավիրելու հանդիպակաց գործելակերպ, ինչը զգալիորեն ընդլայնել է հասարակական սեկտորի՝ ընդունվող օրենքների բովանդակության մեջ փոփոխություններ մտցնելու հնարավորությունները:

Լրացնելով իրավական իրազեկության ոլորտի բացթողումները՝ հասարակական կազմակերպությունները որոշ չափով իրականացնում են նաև կանանց իրավաբանական օգնություն: Կանանց իրավական գրագիտության բարձրացման և նրանց անվճար իրավաբանական խորհրդատվությունների և փաստաբանական ծառայությունների մատուցման ուղղությամբ բավական ծավալուն գործունեություն են իրականացնում Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական հիմնադրամը, Հայաստանի մայրության ֆոնդը, Կանանց իրավունքների կենտրոնը, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, Կանանց հանրապետական խորհուրդը, «Աջակցություն իրավական պետությանը» կազմակերպությունը և այլ իրավապաշտպան և կանանց հասարակական կազմակերպություններ: Առկա փորձը ցույց է տալիս, որ կանայք իրավաբանական օգնության են դիմում հիմնականում ընտանեկան հարաբերությունների (ամուսնալուծություն, ալիմենտների նշանակում և այլն), սեփականության իրավունքի ճանաչման, աշխատանքային հարաբերությունների, կենսաթոշակների հաշվարկման հարցերով:

Երաշխավորություններ.

ՀՀ Ազգային ժողովին.

- քննարկել ՀՀ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու հարցը՝ կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով մարդու իրավունքների պաշտպանի տեղակալի պաշտոն սահմանելու նպատակով,
- քննարկել «Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների մասին» օրենքի ընդունման հնարավորությունը:

ՀՀ կառավարությանը և ՀՀ Ազգային ժողովին.

- ձևավորել փորձագիտական խմբեր՝ օրինագծերի մշակման փուլում գենդերային փորձաքննության, ինչպես նաև ընդունվող միջնաժամկետ հեռանկարաձային զարգացման ծրագրերում հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների արտացոլման երաշխիքների ապահովման նպատակով:

**Հանրապետության դատական մարմիններին.**

- ձևավորել դատական պրակտիկայում սեռի հատկանիշով խտրականության հետ կապված հայցերը քննելիս Կոնվենցիայի դրույթների օգտագործման նախադեպեր:

Հոդված 3**Կանանց առաջընթացի ապահովմանն ուղղված միջոցների համակարգը****Հիմնախնդիրը.**

- Ազգային մեխանիզմի՝ որպես կանանց խտրականության հաղթահարման գործիքի, բացակայությունը:

Հայաստանում մինչև այժմ ազգային մեխանիզմ չի ձևավորվել: Դա ցույց է տալիս քաղաքական կամքի բացակայությունը: ՀՀ առաջին զեկույցի առնչությամբ արված մեկնաբանություններում Կոնվենցիայի կոմիտեն արձանագրում է ազգային մեխանիզմի բացակայությունը և համապատասխանաբար «հաստատակամորեն առաջարկում է Հայաստանի կառավարությանը քայլեր ձեռնարկել ազգային մեխանիզմի ստեղծման ուղղությամբ...»²⁷:

1999 թ. սեպտեմբերին Կոնվենցիայի կոմիտե ներկայացված երկրորդ պարբերական զեկույցում (1996-1999 թթ. ժամանակահատվածի համար)²⁸ Հայաստանում ազգային մեխանիզմ ստեղծելու մասին ոչինչ չի ասվում: Կոմիտեի 2002 թվականի օգոստոսի 7-ին կայացած 571-րդ նիստում զեկույցի բանավոր ներկայացման ժամանակ Հայաստանի ներկայացուցիչը, անդրադառնալով Կոնվենցիայի կոմիտեի հանձնարարականին կանանց առաջընթացի ազգային մեխանիզմ ստեղծելու անհրաժեշտության մասին, նշել է²⁹ 2002 թ. մայիսին սոցիալական ապահովության նախարարությունում կանանց հարցերը համակարգող փոխնախարարի պաշտոնի հիմնադրումը³⁰:

Սակայն ո՛չ տվյալ պաշտոնը, ո՛չ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների վարչությունը, որը ՀՀ

27 *St'u CEDAW* L/52/38/rev.1. (կետ 61), 1997:

28 *CEDAW/C/ARM/2 9 september 1999.*

29 *St'u CEDAW/C/SR.571*, էջ 2:

St'u նաև CEDAW Committee *Press Release WOM/1353* (7 August 2002).

30 *St'u CEDAW A/57/38/ part III (2002)* «2002 թ. մայիսին, համաձայն երկրի վարչապետի հրամանագրի, սահմանվել է կանանց հարցերով փոխնախարարի պաշտոն սոցիալական ապահովության նախարարությունում: Փոխնախարարը գլխավորել է կանանց հարցերի վարչությունը և *համադասել է այլ նախարարությունների կողմից իրականացվող աշխատանքը կանանց հիմնախնդիրների ուղղությամբ*, ապահովել է համագործակցությունը կանանց ՀԿ-ների հետ և *կատարել է Կոնվենցիան գործողության մեջ դնելուն ուղղված աշխատանքը*» (կետ 27). (ընդգծումը հեղինակներինն է):



կառավարությունը ներկայումս համարում է ազգային մեխանիզմ, չեն կարող այդպիսին դիտվել, քանի որ չեն համապատասխանում Կոնվենցիայի կոմիտեի թիվ 6 հանձնարարականում³¹ և Պեկինյան գործողությունների ծրագրում ներկայացված *ազգային մեխանիզմի չափանիշներին*³²:

Այդ փաստը 2002 թվականին արձանագրել են ABA/CELLI-ի փորձագետները Հայաստանում կանանց նկատմամբ խտրականության վիճակի մասին ուսումնասիրությունում, որտեղ նշվում է «Կոնվենցիայի, ... խտրականության դեմ պայքարի և հավասարության ապահովման ուղղությամբ պարտավորությունների կատարման մոնիտորինգի համար»³³ ազգային մեխանիզմի բացակայությունը:

ՀՀ կառավարության ընդունած «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրում» նույնպես արձանագրվում է «կանանց իրավունքներով զբաղվող և համապատասխան լիազորություններով օժտված պետական մարմնի» բացակայությունը³⁴:

Այս հարցում առկա որոշակի թյուրըմբռնումը հետևանք է այն հանգամանքի, որ Հայաստանում հստակ տարբերություն չի դրվում ինստիտուցիոնալ մեխանիզմների և ազգային մեխանիզմի միջև: Այսօր ՀՀ-ում գոյություն ունեցող *ինստիտուցիոնալ մեխանիզմները* (բացի վերը նշված վարչությունից և այն ղեկավարող փոխնախարարից, գործողությունների ազգային պլանի իրականացման պատասխանատվությունը դրված է փոխնախարարների և փոխնարզպետների, զենդերային հավասարության հարցերի

31 Համաձայն *հանձնարարականի*՝ ազգային մեխանիզմը պետք է՝ ա) խորհրդատվություն տրամադրի կանանց վրա պետական քաղաքականության ներազդեցության վերաբերյալ, բ) իրականացնի կանանց վիճակի համակողմանի մոնիտորինգ և գ) մշակի ու ներդնի խտրականության վերացման քաղաքականություն, ծրագիր և միջոցառումներ: *Տե՛ս CEDAW Committee. General Recommendation No. 6 “Effective National Machinery and Publicity”* (seventh session, 1988). <http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/index.html>

32 Ազգային մեխանիզմը սահմանվում է որպես «քաղաքականության համադասման կենտրոնական ստորաբաժանում կառավարության շրջանակներում»: Այն պետք է կառավարությունում առավելագույնս բարձր մակարդակի վրա լինի և ղեկավարվի կաբինետի անդամ նախարարի կողմից: Այդ մեխանիզմը պետք է ունենա համապատասխան իշխանական լիազորություններ և իրավասություն, ներառյալ «բոլոր ոլորտներում կառավարության քաղաքականության մշակման վրա ազդեցություն գործելու հնարավորությունը»: *Տե՛ս Պեկինյան գործողությունների ծրագիր, կետ 201*, հատկապես (a) և (d) ենթակետերը:

33 ABA/CELLI. *CEDAW ASSESSMENT TOOL REPORT ARMENIA*. Washington, DC, 2002, pp. 17-18, 89.

34 *Տե՛ս* <http://www.un.org/womenwatch/daw/Review/english/responses.htm> (“Armenia”, pp. 1-2, 11-12.); *The status of Institutional Mechanisms for Gender Equality in the UNECE Region by country*. ECE/AC.28/2004/4/Add.2, p. 2 ? *National Machinery in Central Asia and the South Caucasus: Progress and Challenges.* CPR 4. Regional Preparatory Meeting for the 10-year Review of Implementation of the BPfA , p. 7. ՀՀ *Ազգային զեկույց*: Կանանց վիճակին նվիրված ՄԱԿ-ի հանձնաժողովի 49-րդ նստաշրջան: Երևան, 2005, էջ 6:



միջգերատեսչական հանձնաժողովի, մարզպետարանների երեխայի իրավունքների հարցերի վարչությունների, վարչապետին առընթեր Կանանց խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի վրա) ո՛չ առանձին-առանձին, ո՛չ էլ որպես միասին չեն համապատասխանում անգամ ազգային մեխանիզմին առաջադրվող նվազագույն չափանիշներին: Կառույցներից ոչ մեկը հակախտրական քաղաքականություն և գենդերային հավասարության քաղաքականություն չի մշակում և չի կիրարկում, չի համադասում կառավարական մարմինների գործողություններն այդ ոլորտում և չի ներգործում տարբեր ոլորտներում քաղաքականության մշակման վրա:

Ազգային մեխանիզմի բացակայության հետևանքով՝

ա) դանդաղում է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին և այլ կոնվենցիաներով ու դաշնագրերով ստանձնած պարտավորությունների կատարումը,

բ) ժամանակին չի նախաձեռնվում համապատասխան օրենքների մշակումը և միջազգային փաստաթղթերի ներկայացումը վավերացման,

գ) դանդաղում է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» արդյունավետ իրականացումը,

դ) լիարժեք չի իրականացվում օրենսդրության մեջ և քաղաքական լեզվում գենդերային բաղադրիչի ինտեգրման ռազմավարությունը,

ե) չի գիտակցվում ժամանակավոր խմբերի, հատուկ հանձնաժողովների և այլ միավորումների անհրաժեշտությունը, և կազմակերպչական առումով դժվարանում է դրանց ստեղծումը, չի ուսումնասիրվում գենդերային շարժընթացը, և չի արձանագրվում խնդրահարույց իրավիճակների առաջացումը,

զ) չի հաջողվում արդյունավետ հավաքագրել և օգտագործել անկախ և պետական հետազոտական կենտրոնների, բուհերի, ՀԿ-ների փորձագիտական ներուժը,

է) դժվարանում է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմների գործունեության համադասումը,

ը) նկատվում է դեկավար մարմինների ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում, օրենսդիր և գործադիր իշխանությունում կանանց ներկայացվածության հարցում գենդերային անհավասարության և սեռի հատկանիշով խտրականության ուժեղացում:

Հայաստանում գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմները բախվում են հետևյալ լուրջ հիմնախնդիրներին.

- ըստ սեռի հատկանիշի խտրականության հաղթահարման և գենդերային հավասարության հաստատման հիմնախնդիրների արմատական լուծման համար անհրաժեշտ քաղաքական կամքի բացակայությունը,
- որոշում ընդունող պետական պաշտոնյաների կողմից գենդերային հավասարության նշանակության և կարևորության ճանաչման բացակայությունը,



- գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմների ոչ հստակ մանդատը և գործառույթները,
- ինստիտուտների մարզինալացումը պետական կառույցների ընդհանուր սխեմայում և կառուցվածքում. դրանք «գետտոյացված են» սոցիալական և սոցապահովման ոլորտներում, և որոշում ընդունող կենտրոնական կառույցներ տեղափոխելու միտումներ չեն նկատվում,
- մեխանիզմների կենտրոնացումը միայն այնպիսի «կանանց հարցերի» վրա, ինչպիսիք են մայրությունը, կանանց կրթությունը, առողջությունը և սոցիալական ապահովությունը՝ առանց պատշաճ ուշադրության արժանացնելու նրանց ներգրավմանը քաղաքական և տնտեսական ոլորտի իշխանության և որոշումների կատարման վերահսկման մակարդակում,
- ինստիտուցիոնալ մեխանիզմների նենգափոխումը նմանակող մեխանիզմներով,
- մի շարք կարևոր կառույցների՝ միջգերատեսչական հանձնաժողովի, կանանց հարցերի գծով վարչապետի խորհրդականի պաշտոնի, գենդերային հավասարության հարցերի միջգերատեսչական աշխատանքային խմբի գործառության ժամանակավոր բնույթը,
- պատասխանատու անձանց հաճախակի փոփոխումը, այդ թվում նաև գլխամասային նախարարության կառուցվածքում³⁵,
- ֆինանսական և մարդկային ռեսուրսների անհամապատասխանությունը, ինչը հանգեցնում է որոշակի կախվածության միջազգային դոնորների տեխնիկական, ֆինանսական և ծրագրային օգնությունից,
- ուսումնասիրություններ, մոնիտորինգ և լիարժեք գենդերային փորձաքննություն անցկացնելու համար համապատասխան ներուժի և ռեսուրսների բացակայությունը,
- գոյություն ունեցող մեխանիզմների թույլ կապը հասարակական կազմակերպությունների հետ:

Երաշխավորություններ

Միջազգային փաստաթղթերի հանձնարարականներին համապատասխան.

- **ՀՀ կառավարությունում ձևավորել արդյունավետ ազգային մեխանիզմ, որը կդառնա գենդերային քաղաքականության գործնական իրականացման ազգային հայեցակարգի մշակման և իրագործման առանցքային կառույցը:**
- **ՀՀ նախագահին կից հիմնել Գենդերային քաղաքականության ազգային խորհուրդ:**
- **ՀՀ Ազգային ժողովում ստեղծել օրենսդրության գենդերային փորձաքննության և Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը վերահսկող հանձնաժողով:**

35 Վերջին երկուսուկես տարվա ընթացքում կանանց հարցերը համադասող փոխնախարարի պաշտոնում փոփոխվել է 5 մարդ:



ՀՀ կառավարությանը.

- բարձրացնել առանձին նախարարությունների միջև համագործակցության և հաղորդակցության արդյունավետությունը և ընդլայնել գեներալային քաղաքականության իրականացման համար պատասխանատու անձանց լիազորությունները,
- հատուկ միջոցառումների, պոզիտիվ ծրագրերի, քաղաքականության և այլ ձեռնարկումների միջոցով ավելի արդյունավետ կանխել սեռի հատկանիշով խտրականությունը,
- ստեղծվող ազգային մեխանիզմի մեջ ներգրավել շահագրգիռ հասարակական կազմակերպություններին,
- ստեղծել հասարակական-պետական Գեներալային հավասարության ազգային հանձնաժողով,
- ստեղծել գեներալային հավասարության հարցերի հետազոտական կենտրոն՝ ինստիտուտի իրավունքներով՝ քաղաքական պրակտիկայում գեներալային բաղադրիչի ներդրման հետ կապված հիմնախնդիրների մշակման և մոնիտորինգի համար:

Հոդված 4

Ժամանակավոր հատուկ միջոցները

Հիմնախնդիրը.

- **Գեներալային անհավասարակշռության հաղթահարման նպատակով ձեռնարկված հատուկ ժամանակավոր միջոցների անարդյունավետությունն ու սահմանափակությունը**

Ա. Ընտրական քվոտաներ: ՀՀ կառավարության 2002 թվականի հաշվետվության արդյունքների հիման վրա Կոնվենցիայի կոմիտեն առաջարկել է կիրառել քվոտավորման գործիքը՝ որպես իշխանությունում գեներալային անհավասարակշռության հաղթահարման եղանակ: Պոզիտիվ խտրականության բազմազան միջոցներից հանրապետությունում կիրառվում են միայն ընտրական քվոտաները: Օրենսդիր իշխանությունում կանանց ներկայացվածության ապահովման համար ժամանակավոր քվոտաների ներդրման մասին առաջարկության մշակումը նախատեսված է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրում»: Նախորդ խմբագրմամբ Ընտրական օրենսգրքով գործող քվոտան՝ կուսակցական ընտրացուցակներում կանանց 5-տոկոսանոց ներկայացվածության պահանջը, չէր կարող չզնահատվել որպես խտրական միջոց կանանց նկատմամբ, քանի որ հակասում էր ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքներին և միջազգային հանձնարարականներին:



2004 թվականի նոյեմբերին քաղաքական կուսակցությունների և կանանց հասարակական կազմակերպությունների կին լիդերների և ակտիվիստների կողմից նախաձեռնվեց պարտադիր և հավասարաչափ 25-տոկոսանոց քվոտա մտցնելու մասին առաջարկությունը, որը հնարավորություն կտար ընդլայնելու ՀՀ Ազգային ժողովում հանրապետության կանանց թերի ներկայացված խումբը: Սակայն խորհրդարանական մեծամասնության հետ խորհրդատվությունից հետո հանրապետության Ընտրական օրենսգրքում ամրագրվել է 15-տոկոսանոց քվոտա (կուսակցական ցուցակում առնվազն յուրաքանչյուր տասներորդ տեղը վերապահվում է կանանց), որը, ինչպես ցույց է տալիս ընտրական գործընթացների գեներային վերլուծությունը, արդեն իսկ նվաճված սահմանագիծ է և իրականում չի կարող հանգեցնել խորհրդարանում կանանց թվի զգալի մեծացման: 2007 թվականի ընտրությունների տվյալներով, ընդունված քվոտան նպաստել է կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության մինչև 22,6% ընդլայնմանը, համեմատության համար նշենք, որ 2003 թվականին առաջադրված կուսակցությունների ցուցակներում կանայք կազմել են 14,2%:

Հանրապետությունում անցկացված մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ վկայում են, որ պատգամավորների ներկայիս գեներային կազմը չի համապատասխանում խորհրդարանում կանանց ակնկալվող տեսակարար կշռի մասին հասարակական պատկերացումներին: Այնուամենայնիվ, քվոտաները՝ որպես օրենսդիր իշխանությունում գեներային անհավասարակշռության հաղթահարման եղանակ, միանշանակ չեն ընկալվում քաղաքական վերնախավի և հասարակայնության կողմից: Հասարակական կարծիքի հարցումները³⁶ բացահայտել են 37,8% քվոտավորման կողմնակիցներ տղամարդկանց և 50,4%՝ կանանց շրջանում: Այս միջոցի հակառակորդների և կողմնակիցների փորձագիտական կարծիքները սահմանափակվում են սովորական փաստարկների շրջանակներում³⁷: «Դեմ» դիրքորոշումը հանգում է այն մտքին, որ քվոտան արհեստական, մեխանիկական միջոց է՝ բացասական դրսևորված խորհրդային ժամանակաշրջանում, որ խորհրդարանը հոգեբանորեն պատրաստ չէ էական քվոտաներ ընդունել, և որ քվոտա մտցնելը կարող է կոնֆլիկտների հանգեցնել կուսակցությունների ներսում: «Կողմ» դիրքորոշումը ելնում է հասարակական գիտակցության կարծրատիպերի և բացասական քաղաքական գործելակերպի հաղթահարման անհրաժեշտությունից և հիմնվում այն տեսակետի վրա, որ քվոտան ոչ թե խտրական, այլ փոխհատուցող, անջրպետները վերացնող միջոց է, ժամանակավոր բնույթ է կրում և չի հակասում ներ-

36 Հայաստանում քաղաքացիների իրավական իրազեկությունը և մասնակցությունը / IFES, Երևան, 2004

37 Այդ են վկայում հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների, պետական պաշտոնյաների և խորհրդարանի պատգամավորների հետ զրույցները և ֆոկլուս խմբերը, որոնք անցկացվել են «Գեներային ներկայացվածությունը կառավարման համակարգում և որոշումների ընդունման մակարդակում» հետազոտության ընթացքում «ՀՀ-ում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի և Հագարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգի» շրջանակներում (2006 թ.):



կայացուցչական ժողովրդավարության սկզբունքներին: Բացի այդ, կանանց քանակական առաջխաղացումը ժամանակի ընթացքում կապահովի նաև որակական փոփոխություններ, ինչը հաստատում է համաշխարհային փորձը:

Ընդհանուր առմամբ, հետազոտությունները ցույց են տալիս, որ որոշումների ընդունման մակարդակում գենդերային անհավասարակշռության հաղթահարման նպատակով հատուկ միջոցները, մասնավորապես քվոտավորման օգտագործման հնարավորությունները սերտորեն փոխկապակցված են ներկուսակցական ժողովրդավարության հիմնախնդիրների, կանանց կուսակցական կադրերի պատրաստման համակարգի բացակայության և կանանց լիդերության զարգացման, ինչպես նաև հասարակական գիտակցության մեջ կարծրատիպերի հաղթահարման և կանանց ինքնագնահատականի բարձրացման հետ:

Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովին.

- քննարկել Ընտրական օրենսգրքում նախատեսված կուսակցական ցուցակներում կանանց 15-տոկոսանոց հավասարաչափ ներկայացվածության քվոտան մինչև 25 տոկոս բարձրացնելու հարցը:

Քաղաքական կուսակցություններին.

- ձևավորել ռազմավարական և ղեկավար պաշտոնների կադրերի գենդերայնորեն հաշվեկշռված առաջադրմանն ուղղված միջոցառումների համակարգ՝ իշխանությունում կանանց կադրերի «կրիտիկական զանգվածի» հասնելու նպատակով, ընդլայնել փորձի փոխանակումը այլ երկրների քաղաքական կուսակցությունների հետ, որոնք հաջողության են հասել գենդերային հավասարակշռության նվաճման և դրական խտրականության մեթոդների կիրառման հարցում:

ՀՀ կառավարությանը.

- քննարկել գործադիր իշխանության ղեկավար պաշտոնների մրցութային ընտրության և նշանակման ժամանակ «կանանց աջակցող դրական միջոցների» ներդրման հարցը:

Չանգվածային լրատվության միջոցներին.

- նախաձեռնել բացատրական քարոզարշավներ գործադիր և օրենսդիր իշխանությունում գենդերային անհավասարակշռության հաղթահարման նպատակով պոզիտիվ խտրականության մեթոդների կիրառման անհրաժեշտության վերաբերյալ:

Բ. Հատուկ միջոցներ: ՀՀ կառավարության ներկայացրած երկրորդ զեկույցի առնչությամբ Կոնվենցիայի կոմիտեի հանձնարարականների համաձայն՝ նոր Աշխատանքային օրենսգրքում արգելող միջոցները, որոնց նպատակն է պաշտպանել մայրությունը,



փոխարինված են երաշխավորող միջոցներով: 2005 թվականին ՀՀ Սահմանադրությունում կատարված փոփոխություններում, որպես պետության հիմնական խնդիր, ամրագրված է ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանությունը և հովանավորությունը (հոդված 48, կետ 1):

Երկրի օրենսդրությունում, մասնավորապես նորացված Աշխատանքային (2004), Քրեական (2003), Ընտանեկան (2004) օրենսգրքերում, ըստ փորձագետների գնահատականների, ներկայացված է մայրության պաշտպանությանն ուղղված միջոցների բավական լայն համակարգ ինչպես աշխատող կանանց, այնպես էլ ազատագրկման վայրերում պատիժ կրող կանանց համար: ՀՀ Աշխատանքային և Քրեական օրենսգրքերը նախատեսում են հատուկ արտոնություններ և յուրահատուկ վերաբերմունք հղի կանանց, մանկահասակ երեխաներ ունեցող կանանց և բազմազավակ մայրերի համար: Մասնավորապես գործատուներին արգելվում է աշխատանքից ազատել հղի և մանկահասակ երեխա ունեցող կանանց, արգելվում է մերժել կանանց աշխատանքի ընդունումը այդ նույն հանգամանքների կապակցությամբ:

Հղի կանայք և մինչև երեք տարեկան երեխա խմամող աշխատողները միայն իրենց համաձայնությամբ կարող են ներգրավվել գիշերային, արտաժամյա, ինչպես նաև հանգստյան և տոնական օրերի աշխատանքների մեջ: Աշխատանքային օրենսգիրքը նաև հնարավորություն է ընձեռում ընտանիքի մյուս անդամներին, այդ թվում հայրերին, ցանկության դեպքում օգտվել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից, ինչը, անկասկած, մեկ քայլ առաջ է կանանց և տղամարդկանց աշխատանքային և ընտանեկան պարտականությունների հավասարակշռված բաշխմանը նպաստելու առումով:

ՀՀ Քրեական օրենսգիրքը հնարավորություն է տալիս աշխատող կնոջը հղիության, ծննդաբերության կապակցությամբ, ինչպես նաև մինչև երեխայի երեք տարին լրանալը տրվող արձակուրդի ժամկետի սահմաններում հետաձգելու հղի և մինչև 14 տարեկան երեխա ունեցող և երեք տարի ժամկետով ազատագրկման դատապարտված կանանց պատժի կրումը կամ ազատելու նրանց պատիժը կրելուց, բացառությամբ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար ավելի քան հինգ տարվա ազատագրկման դատապարտված անձանց: Օրենսդրությունը հղի և մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց համար նախատեսում է պատիժ կրելու բարելավված պայմաններ:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- բարձրացնել բնակչության իրազեկությունը ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանությանն ուղղված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:

**Հոդված 5.****Տղամարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելների փոփոխում****Հիմնախնդիրները.**

- Հայ հասարակությունում գենդերային կարծրատիպերի լայն տարածվածությունը:
- Գենդերային կարծրատիպերի և սեքսիզմի դրսևորումների հաղթահարմանն ուղղված պետական միջոցների բացակայությունը:
- ՁԼՄ-ներում կնոջ կերպարի կարծրատիպային պատկերացումների վերարտադրությունը և պահպանումը:

Կոնվենցիայի կոմիտեն 2002 թվականի իր հանձնարարականներում մտահոգություն է հայտնել ընտանիքում և հասարակությունում արմատացած հայրիշխանական հարաբերությունների կապակցությամբ և հանձնարարել է կառավարությանը գենդերային կրթության միջոցով ձեռնարկել կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված գործողություններ:

Հասարակական կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ կարծրատիպային մոտեցումները կանանց առաջընթացի հիմնական խոչընդոտներից մեկն են: Սակայն ներագրեցությունը հասարակական գիտակցության մակարդակում առավել դժվար լուծելի խնդիրներից է, քանի որ բախվում է ժառանգած ավանդույթների և սովորույթների հակադրեցությանը, որոնց փոփոխումը կամ վերացումը այնքան էլ հեշտ գործ չէ:

Ըստ «Քաղաքացիական հասարակությունը խորհրդարանական ընտրությունների նախաշեմին. էլեկտորալ վարքագիծը և գենդերային կարծրատիպերը»³⁸ սոցիոլոգիական հարցման տվյալների՝ կանանց 74%-ը և տղամարդկանց 56,5%-ը համարում են, որ կինը պետք է զբաղվի քաղաքական գործունեությամբ, իրենց պատասխանով գոնե վիրտուալ մակարդակում մերժելով այն նախապաշարմունքը, թե քաղաքականությունը կնոջ գործը չէ: Նրանք, ովքեր կարծում են, թե կինը չպետք է ներխուժի քաղաքականություն, կազմում են հարցված տղամարդկանց 28,8%-ը և կանանց՝ 17,3%-ը: Ըստ փորձագետների՝ այս կոհորտայում տղամարդկանց բավական մեծ տոկոսը և կանանց առկայությունն իսկ ավելի քան մտահոգիչ են: Բարձրագույն կրթություն ունեցող հարցված տղամարդկանց՝ կայուն կարծրատիպի հետևող հատվածը՝ գրեթե մեկ երրորդը, արդեն իսկ կրիտիկական զանգված է և ունակ է դառնալու ազդեցության ռեֆերենտ խումբ, որի միջոցով ձևավորվում են իդեալները, աշխարհընկալումները, դիրքորոշումները, արժեքները և վարքագծի մոդելները:

38 Ընտրական ժողովրդավարություն. ունի^o արդյոք Հայաստանը այլընտրանք, սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2003, էջ 122:



Ինչպես վկայում են 2005 թվականին անցկացված հարցումներից մեկի³⁹ տվյալները, իշխանության մակարդակում գենդերային ներդաշնակության կայացումը խոչընդոտող գործոնների շարքում հարցվողները ամենից առաջ նշում են հասարակության ավանդական մտածելակերպը, այնուհետև անցումային շրջանի սոցիալ-տնտեսական դժվարությունները: Հիմնավորելով կանանց օտարումը քաղաքականությունից՝ հարցվողները դիմում են մի շարք առասպելների, որոնք, ինչպես պարզվում է մանրակրկիտ ուսումնասիրմամբ, ընդամենը մտածողության նոր մոդելի տեսքով երևան եկող կարծրատիպեր են: Դրանց շարքում են՝ «Կանայք իրենք չեն ցանկանում առաջադրվել, քանի որ վախենում են կեղտոտ տեխնոլոգիաներից» կամ «Չկան կանանց համապատասխան թեկնածություններ»:

Մամուլի էջերում կանանց փորձագիտական կարծիքի ներկայացվածության մոնիտորինգի արդյունքներով Հայաստանը զբաղեցնում է վերջին տեղերից մեկը հետխորհրդային տարածքի 8 երկրների շարքում⁴⁰: Կանանց փորձագիտական կարծիքը գործնականում չի արտացոլվում պարբերական հրատարակությունների էջերում, ինչը ցույց է տալիս ՁԼՄ-ներում գենդերային քաղաքականության բացակայությունը, որի հետևանքով ստեղծվում է կարծրատիպային ընկալում, թե կանայք ունակ չեն դրսևորելու հասարակական-քաղաքական ակտիվություն և ազդելու որոշումների ընդունման գործընթացների վրա: Հանրապետությունում սեքսիզմի դրսևորումների դեմ պայքարի փորձ գոյություն չունի, պետությունը չի արձագանքում գովազդում և ՁԼՄ-ներում առկա սեքսիզմին:

Մինչև վերջին ժամանակներս գենդերային կրթությունը իրականացվում էր սոսկ ոչ ֆորմալ կրթության համակարգում և միայն հանրապետության հասարակական սեկտորի ուժերով: Կանանց կազմակերպությունները ստանձնել են կանանց լիդերության զարգացման, կանանց ակտիվ քաղաքացիական կյանքի ձևերի ձևավորման, նրանց մեջ կազմակերպչական աշխատանքի հմտությունների և պետական մտածելակերպի պատվաստման, հայ հասարակությունում տիրապետող գենդերային կարծրատիպերի հաղթահարման և կնոջ դերի մասին պատկերացումների փոփոխման գործառույթները: Վերջին տարիներին բնորոշ է հասարակական սեկտորի նախաձեռնած **գենդերային կրթության ինստիտուցիոնալացման** գործընթացը: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Երևանի, Վանաձորի, Գյումրիի գենդերային հետազոտությունների կենտրոնները ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացնում են գենդերային կրթության ինստիտուցիոնալացումը **երկրի 10 համալսարաններում և 30 հանրակրթական** դպրոցներում: Մշակվել են «Գենդերային կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնադրույթները» և «Գենդերային կրթու-

39 Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. գենդերային հավասարության չափումը, սոցիոլոգիական հետազոտություն / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2006.:

40 *Женское мнение в СМИ, материалы мониторинга национальных газет в странах Южного Кавказа и Центральной Азии / Коалиция «Кавказия, Тбилиси, 2005.*



թյան պետական չափորոշիչների նախագծերը», կատարելագործվել և ստեղծվել են գենդերային դասընթացների նոր ծրագրեր, վարվում են 7 միջառարկայական և 13 հատուկ գենդերային դասընթացներ: Դասավանդումն ապահովելու նպատակով մշակվել և հրատարակվել են մեթոդական և ուսումնական ձեռնարկներ, գիտական հետազոտությունների ժողովածուներ, փորձարկման շրջան է անցնում հանրակրթական դպրոցի համար նախատեսված «Գենդերային գիտելիքների դասեր» ուսումնա-մեթոդական համալիրը, որը ներառում է ուսումնական ձեռնարկ, մեթոդական հանձնարարականներ, գենդերային կրթության չափորոշիչ և ծրագիր:

Վերջին 4-5 տարիներին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոնի իրականացրած ծրագրերը «Գենդերային իրազեկություն և գենդերային զգայունություն. զուգակշռված ժողովրդավարության նախադրյալներ» և «Գենդերային գիտելիքները որպես ժողովրդավարական մշակույթի և իրավագիտակցության ձևավորման նախադրյալ» նախագծերի շրջանակներում, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (Վարչավա) աջակցությամբ, ցույց են տալիս, որ տարեցտարի հասարակությունում նկատվում է գենդերային հավասարության դրական ընկալում, գենդերային դասընթացներ անցած ուսանողների մեջ ձևավորվում են այնպիսի ժողովրդավարական արժեքներ, ինչպիսին է հարգանքը կանանց քաղաքացիական դիրքորոշման և հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքների նկատմամբ:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- առավել լայնորեն ներդնել գենդերային կրթությունը միջնակարգ դպրոցում և բուհերում՝ աճող սերնդի մեջ իրավահավասար ժողովրդավարական մշակույթի ձևավորման և հասարակությունում կնոջ դերի և տեղի մասին կարծրատիպային պատկերացումների հաղթահարման նպատակով,
- աջակցել գենդերային հետազոտությունների կենտրոնների աշխատանքին՝ ուղղված գենդերային գիտելիքների տարածմանը և բնակչության բոլոր շերտերի իրազեկմանը,
- կանանց ՀԿ-ների հետ համագործակցությամբ սկզբնավորել ՉԼՄ-ների խրախուսման գործելակերպ գենդերային հիմնախնդիրների լուսաբանման համար, կազմակերպել հիմնախնդիրն նվիրված լավագույն նյութի մրցույթներ, կազմակերպել քարոզարշավներ և հրապարակային ակցիաներ ՉԼՄ-ներում, գովազդում և լրատվության այլ աղբյուրներում սեքսիստական մոտեցումների և այլ խտրական գործելակերպի հաղթահարման ուղղությամբ,
- նպաստել գենդերային կարծրատիպերի հաղթահարման և կանանց հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացման ուղղությամբ ՀԿ-ներ-ՉԼՄ-ներ-իշխանա-



կան կառույցներ համագործակցության գործընկերային մոդելների կայացմանը, նպաստել ՉԼՄ-ներում գենդերային քաղաքականության ձևավորմանը,

- քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցելով՝ միջոցներ իրականացնել հասարակությունը սեռի հատկանիշով խտրականության բոլոր ձևերի դրսևորումներից զերծ պահելու, գենդերային հավասարության գաղափարը վարկաբեկող բացասական գործելակերպը կանխելու ուղղությամբ:

Հոդված 6

Կանանց առևտրի և մարմնավաճառության շահագործման բոլոր ձևերի կանխումը

Հիմնախնդիրները.

- Թրաֆիկինգի դեմ պայքարում կիրառվող միջոցների անբավարարությունը:
- Թրաֆիկինգի և մարմնավաճառության վերաբերյալ ճշգրիտ տվյալների բացակայությունը:

Կոնվենցիայի կոմիտեն 2002 թվականի իր հանձնարարականներում հատուկ ուշադրություն է դարձրել ընտանեկան բռնության, մարմնավաճառության և թրաֆիկինգի խնդիրներին և հաստատակամորեն հանձնարարել է ՀՀ կառավարությանը մշակել թրաֆիկինգի դեմ պայքարի հատուկ ռազմավարություն:

2002 թվականի դեկտեմբերին Հայաստանի կառավարությունը որոշում է ընդունել մարդկանց ապօրինի տեղափոխման և առևտրի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին: Դրանում ընդգրկվել են արտաքին գործերի, ներքին գործերի, առողջապահության, սոցիալական ապահովության նախարարությունների, ինչպես նաև խորհրդարանի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի, կառավարության ապարատի, փախստականների և միգրացիայի հարցերի վարչության, Ազգային վիճակագրական ծառայության, գլխավոր դատախազության, մաքսային կոմիտեի և «Զվարթնոց» օդանավակայանի ներկայացուցիչները: 2003 թվականին ընդունված նոր Քրեական օրենսգրքում գետեղվել են հատուկ հոդվածներ, որոնք նախատեսում են այդ տեսակի հանցագործության համար պատժի խստացում: Հայաստանը միացել է մարդկանց առևտրի դեմ պայքարին ուղղված մի շարք միջազգային փաստաթղթերի:

Վերջին տարիներին թրաֆիկինգի դեմ պայքարին ակտիվորեն միացել են հանրապետության հասարակական կազմակերպությունները և ՉԼՄ-ների ներկայացուցիչները: Նրանց աշխատանքում հիմնական շեշտը դրվում է կանխարգելման միջոցների վրա, ներառյալ բացատրական աշխատանքը բնակչության շրջանում, հնարավոր գոհերի իրավագիտակցության բարձրացումը, ստրկության մեջ հայտնված և խաբեու-



թյամբ մարմնավաճառության բիզնեսում ներգրավված քաղաքացիներին իրավաբանական օգնության տրամադրումը: Հատուկ ուշադրություն է հատկացվում երիտասարդության հետ աշխատանքին և թրաֆիկինգից երեխաների պաշտպանության ապահովմանը: Այնուամենայնիվ, այդ միջոցները բավարար չեն տվյալ երևույթը հաղթահարելու համար:

Հիմնական բարդությունը այդ երևույթի մասշտաբների գնահատումն է: Մի կողմից՝ մարմնավաճառության և թրաֆիկինգի մասին ճշգրիտ տվյալների բացակայությունը, մյուս կողմից՝ ՀՀ քաղաքացիներին արտասահմանում մշտական և բարձր վարձատրվող աշխատանք խոստացող աշխատանքի տեղավորման ֆիրմաների, ամուսնական գործակալությունների, ծանոթության ծառայություններ առաջարկող տարբեր ինտերնետ-կայքերի առատությունը վկայում են, որ այս երևույթի չափերը շատ ավելի մեծ կարող են լինել, քան ՀՀ Ոստիկանության հայտնաբերած դեպքերը: Թմրաբիզնեսի և թրաֆիկինգի դեմ պայքարի վարչության տվյալների համաձայն՝ 2005 թվականին ՀՀ Քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածով (կավատություն և թրաֆիկինգ) երկրում հարուցվել է 31 գործ, դրանցից 14-ը հանձնվել է դատարան, 17-ով կայացվել են մեղադրական դատավճիռներ: Ազատագրված պատիժ է կիրառվել միայն 7 մեղադրյալի նկատմամբ: Մնացած դեպքերում գործն ավարտվել է պայմանական պատիժներով, ուղղիչ աշխատանքներով կամ տուգանքով:

ԱՄՆ Պետդեպարտամենտի՝ թրաֆիկինգին նվիրված 6-րդ զեկույցում՝ հրապարակված 2006 թ. հունիսին, այս թվերը գնահատվում են չափազանց փոքր, իսկ դատավճիռները՝ անհամապատասխան հանցագործության ծանրությանը և ՀՀ ՔՕ 132-րդ հոդվածով նախատեսված պատժին: Այդ զեկույցում Հայաստանը դասվել է երկրների երկրորդ խմբի շարքը (առանձնահատուկ հսկողության խումբ), այսինքն՝ այն երկրների, որոնց իշխանությունները բավարար եռանդով չեն պայքարում մարդկանց ապօրինի վաճառքի դեմ: Չեկույցում մասնավորապես նշվում է. «Հայաստանը աղբյուր երկիր է և ավելի քիչ չափով՝ տարանցիկ և նշանակման երկիր կանանց և աղջիկների համար, որոնց դուրս են բերում սեռական շահագործման նպատակով, հիմնականում Միացյալ Արաբական Էմիրաթներ և Թուրքիա»:

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2006 թվականին սեռական շահագործման է ենթարկվել 182 կին, նրանցից 30-ը՝ ՔՕ 132-րդ հոդվածով (թրաֆիկինգ). 36 կին շահագործվել է Հայաստանի տարածքում, 10-ը՝ Թուրքիայում և 136-ը՝ Էմիրաթներում:

Ներկայումս Թրաֆիկինգի դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովը մշակում է գործողությունների նոր ազգային ծրագիր:



Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- ակտիվացնել բացատրական աշխատանքը բնակչության սոցիալապես անապահով շերտերի շրջանում, որոնք թրաֆիկինգի հնարավոր զոհ են, այդ գործում ընդգրկել ՀԿ-ներին և ՉԼՄ-ներին:

Դատական մարմիններին.

- ստեղծել թրաֆիկինգի համար Քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատժի կիրառման նախադեպեր և ՉԼՄ-ների միջոցով լայնորեն լուսաբանել դրանք:



ՄԱՍ 2

Հոդված 7

Կանանց նկատմամբ խտրականության վերացումը երկրի քաղաքական և հասարակական կյանքում

Հիմնախնդիրները.

- Իշխանության ապաֆեմինացումը և որոշումների ընդունման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածությունը գործադիր իշխանության բոլոր ճյուղերում, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:
- Կանանց անմրցունակությունը Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:
- Կանանց սահմանափակ ազդեցությունը պետական ներքին և արտաքին քաղաքականության վրա:

Կանայք իշխանության կառույցներում: Կոնվենցիայի կոմիտեի 2002 թվականի հանձնարարականներում մտահոգություն է հայտնված քաղաքական կառույցներում կանանց նվազ ներկայացվածության կապակցությամբ: Որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության վերջին տվյալների վերլուծությունը վկայում է, որ խտրական գործելակերպը այս ոլորտում հաղթահարված չէ:

Գործադիր իշխանության քաղաքական պաշտոններում⁴¹, որոնք մասնակցում են քաղաքական որոշումների ընդունմանը, կանայք այսօր ներկայացված են միայն երկու՝ ՀՀ մշակույթի նախարարի և Շիրակի մարզպետի պաշտոնում:

Փոխնախարարների 65 հայեցողական պաշտոններում, որոնք ազդեցություն ունեն քաղաքական որոշումների կայացման վրա, ընդամենը երկու կին կա, որոնք կազմում են

41 ՀՀ օրենսդրությամբ պետական ծառայության համակարգում պաշտոնեական ստորակարգությունը ենթադրում է պաշտոնների երեք տեսակ՝ քաղաքական, հայեցողական և քաղաքացիական ծառայողներ:



3 %: Նախագահի և վարչապետի խորհրդականների կազմում կին չկա: 15 նախարարություններից 4-ում 6 կին զբաղեցնում է նախարարի խորհրդականի պաշտոնը: Մարգարյան իշխանությունների կազմում մարզպետի պաշտոնում միայն 1 կին կա (11-ից), և մեկ կին է զբաղեցնում փոխմարզպետի պաշտոնը (17-ից):

Կանայք չափազանց սակավ են նաև քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում: ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգում ծառայողների գենդերային կազմի տվյալների վերլուծությունը բացահայտել է տղամարդկանց զգալի գերակշռություն բարձրագույն (89,6% տղամարդ և 10,4% կին) և գլխավոր խմբի պաշտոններում (65,1% տղամարդ և 34,9% կին), և հակառակը՝ կանանց գերակշռություն առաջատար և կրտսեր ծառայողների պաշտոններում (39,2% տղամարդ և 60,7% կին):

Որոշումների ընդունման մակարդակում գենդերային անհավասարակշռությունը նկատվում է միայն այն դեպքում, երբ դիտարկում ենք ծառայողների ըստ պաշտոնների բաշխումը գործադիր իշխանության համակարգում, նախագահի, կառավարության և նախարարությունների աշխատակազմերում: Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, որոնց համաձայն նախագահի աշխատակազմում կանայք կազմում են 46,3%, կառավարության աշխատակազմում՝ 53,9%, իսկ մի շարք նախարարություններում կանայք զգալի մեծամասնություն են կազմում, չեն արտացոլում այդ կառույցներում որոշումների ընդունման մակարդակում կանանց իրական թերներկայացվածությունը:

Աղյուսակ 1. Քաղաքացիական ծառայողների բաշխումն ըստ պաշտոնական խմբերի և սեռի (մարդ)

Իշխանության մարմինները քաղաքացիական ծառայության համակարգում	Տղամարդ				Կին			
	Բարձրագույն	Գլխավոր	Առաջատար	Կրտսեր	Բարձրագույն	Գլխավոր	Առաջատար	Կրտսեր
Նախագահի աշխատակազմ	8	39	12	3	3	24	13	5
Կառավարության աշխատակազմ	11	48	11	0	3	27	26	3
Նախարարություններ	52	885	529	226	4	525	792	483

(Աղբյուրը՝ Քաղաքացիական ծառայության խորհուրդ, 2005 թ.)

Նախագահի աշխատակազմում քաղաքացիական ծառայության 11 բարձրագույն պաշտոններում կանայք միայն 3 վարչության պետի պաշտոններն են զբաղեցնում: Վարչապետի աշխատակազմում 14 բարձրագույն պաշտոններից մույնպես միայն 3 վարչության պետի պաշտոններն են կանայք զբաղեցնում: Այդ աշխատակազմերի մնացած աշխատակցուհիները ավելի ցածր որակավորման ծառայողներ են, որոնց պաշտոնները, ըստ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի, չեն ենթադրում պատասխանատվություն ոչ միայն քաղաքական, այլև մասնագիտական որոշումների հա-



մար: Նույնպիսի օրինաչափություն է դիտվում բոլոր նախարարությունների աշխատակազմերի զեկույցային կազմում:

Կանանց ներկայացվածության շարժընթացը **օրենսդիր** իշխանությունում հաստատում է անհասպաղ միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությունը՝ ՀՀ Ազգային ժողովում կանանց թվի զգալի աճ ապահովելու համար:

Աղյուսակ 2. Օրենսդիր իշխանությունում տղամարդկանց և կանանց ներկայացվածության շարժընթացը

Տարի	տոկոս	
	Կանայք	Տղամարդիկ
1990	3,7	96,3
1995	6,3	93,7
1999	3,1	96,9
2003	5,3	94,7
2007	9.1	90,9

2003 թ. խորհրդարանական ընտրություններում համամասնական ընտրակարգով խորհրդարան է մտել ընդամենը 6 կին: Այդ ընտրություններին մասնակցած 17 կուսակցությունների և 4 դաշինքների կուսակցական ցուցակների վերլուծությունը հնարավորություն է տալիս ասելու, որ նույնիսկ կանանց համար բարենպաստ համարվող համամասնական համակարգով նրանց ընտրվելու հնարավորություններն ի սկզբանե շատ ցածր են եղել, քանի որ կանանց թեկնածությունները մեծ մասամբ ներկայացված են եղել ոչ անցողիկ տեղերում:

2007 թ. ընտրություններում արդեն, երբ գործում էր կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության պարտադիր 15%-անոց քվոտան, ընդ որում առնվազն յուրաքանչյուր 10-րդ տեղում, խորհրդարան անցավ 12 կին: Ընդհանուր հաշվով առաջադրված 22 կուսակցությունների և մեկ դաշինքի ցուցակներում ներկայացված 1313 թեկնածուներից ընդամենը 297-ն է կին եղել կամ 22,6%-ը: Համեմատության համար նշենք, որ 2003 թ. խորհրդարանական ընտրություններում կուսակցական ցուցակներով առաջադրվել է 162 կին (1143 թեկնածուներից), ինչը կազմում է 14,1%:

2003 թվականին առաջին տասնյակում ներկայացվել է 27, իսկ 2007-ին՝ 37 կնոջ թեկնածություն: Ցուցակների առաջին հնգյակում 2003 թ., եղել է ընդամենը 6 կին, 2007-ին՝ 17, ընդ որում նման նախաձեռնություն է ցուցաբերել միայն առաջադրված կուսակցությունների կեսը: Ընդհանուր առմամբ սահմանված քվոտան դրական ազդեցություն է ունեցել, սակայն դա բավարար միջոց չէ, քանզի պարզվեց, որ խորհրդարանական խմբակցությունների մեծ մասում, ի տարբերություն նախընտրական ցուցակների, կանանց ներկայացվածությունը 15%-ից շատ ավելի ցածր է:

Մ
Ա
Ս
2



2003 թ. խորհրդարանական ընտրություններում մեծամասնական ընտրակարգով 56 միամանդատ ընտրատարածքներից միայն մեկում է կին ընտրվել, իսկ 2007-ին՝ ոչ ոք: 2003 թ. առաջադրվել է ընդամենը 18 կին, որը կազմում է այդ ընտրակարգով առաջադրված թեկնածուների ընդհանուր թվի 4,4%-ը, 2007-ին՝ ընդամենը 5 կին (3,7%): 1999, 2003, 2007 թթ. խորհրդարանական ընտրություններին մեծամասնական համակարգով կանանց մասնակցության շարժընթացի ուսումնասիրությունը վեր է հանում միամանդատ ընտրատարածքներում առաջադրվող կանանց թվի նվազման հաստատուն միտում (10 անգամ՝ 1999 թվականի համեմատ), ինչը, ընտրատարածքների քանակի նվազման հաշվառմամբ, տոկոսային հարաբերությամբ կազմում է 6,6% 1999 թվականին և 3,7% 2007 թվականին:

Ընտրություններում մասնակցության փորձ ունեցող կին թեկնածուների կարծիքների վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու մեծամասնական ընտրակարգից կանանց խուսափելու հետևյալ պատճառները.

- ընտրությունների առևտրականացման բարձր աստիճանը,
- կանանց շրջանում ֆինանսական ռեսուրսների բացակայությունը,
- միամանդատ ընտրատարածքներում դաժան պայքարը,
- «կեղտոտ» տեխնոլոգիաների լայն տարածումը,
- ընտրական օրենսդրության անկատարությունը,
- քաղաքական փորձի պակասը,
- կանանց կազմակերպությունների կողմից աջակցության բացակայությունը:

Տեղական իշխանության և տարածքային կառավարման մակարդակներում՝ մարզպետարանների և Երևանի⁴² քաղաքապետարանի աշխատակազմերում զբաղված աշխատակիցների կազմը արտացոլում է քաղաքացիական ծառայության համակարգում բացահայտված օրինաչափությունները. կանայք 8,3% են կազմում բարձրագույն խմբի պաշտոններում և 62%՝ կրտսեր ծառայողների կարգավիճակում:

Տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրությունների միջոցով ձևավորվող պաշտոններում տղամարդկանց և կանանց ներկայացվածության վերլուծությունը վեր է հանում գենդերային անհավասարակշռության նույն միտումները: Հանրապետության 47 քաղաքների քաղաքապետերի ընտրովի պաշտոններից և ոչ մեկը կին չի զբաղեցնում:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանցում ցածր է կանանց մասնակցությունը, մինչդեռ այն կարող էր նպաստել իշխանության այս մակարդակում քաղաքական փորձի ձեռքբերմանը, որը կկանխորոշեր կանանց հետագա քաղաքական առաջխաղացումը: Ավագանու վերջին երեք ընտրություններում (1999, 2002, 2005 թթ.) առաջադրված և ընտրված կա-

42 Մինչև 2005թ. հոկտեմբերին ընդունված սահմանադրական փոփոխությունները Երևանն ուներ մարզի կարգավիճակ:



նանց թվի շարժընթացը էական փոփոխությունների չի ենթարկվել՝ 4,7 %-ից 1999 թ. մինչև 6,2 % 2005-ին:

Շատ ավելի ցածր է կանանց թիվը տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կազմում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք մեծ մասամբ ղեկավարում են հանրապետության սահմանամերձ շրջանների՝ առավել ծանր կացության մեջ հայտնված համայնքներն ու գյուղերը: Ըստ 1999 թ. ընտրությունների տվյալների՝ համայնքների ղեկավարների կազմում ընտրվել է 2,7% կին, 2002 թ.՝ 1,96%, ընդ որում բացառապես գյուղական համայնքներում, իսկ 2005 թ.՝ 2,1% և դարձյալ գյուղական համայնքներում: 2005 թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում առաջին անգամ կանայք առաջադրվել են 5 քաղաքների քաղաքապետերի պաշտոններում, ու թեև նրանցից ոչ ոք չի ընտրվել, տեղական իշխանության ղեկավար պաշտոններում կին թեկնածուների առաջադրման փաստն ինքնին դրական է: Հարկ է նշել, որ Հազարամյակի զարգացման նպատակների շրջանակներում հանրապետության կառավարությունը պարտավորություն է ստանձնել 2015 թվականին ապահովել համայնքի ղեկավարների թվում կանանց 10%-ի բաժնեմասը, սակայն մինչև այժմ պահպանվող շարժընթացը կասկածի տակ է դնում այդ նպատակի իրականացումը:

Հանրապետության **դատական** իշխանության համակարգում դատավորների 20%-ը կանայք են, այսինքն՝ յուշաբանչյուր հինգերորդ դատավորը կին է: Փաստաբանական գործունեության ոլորտում կանայք կազմում են 36%:

Դատախազության համակարգում կին դատախազներն ընդամենը 8% են կազմում, ընդ որում նրանցից միայն մեկն է զբաղեցնում մարզի դատախազի պաշտոն: Դատախազության աշխատակազմում կանայք կազմում են աշխատողների ընդամենը 6%-ը, դատախազության քննիչների կազմում՝ 2%-ը: ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմում 46%-ն է կին, բայց գեներային հավասարակշռությունն ապահովվում է միջին և ստորին օղակի աշխատակիցների հաշվին:

Կանայք քաղաքական կուսակցություններում: Ըստ վերջին տվյալների, հանրապետությունում գրանցված է մոտ 80 քաղաքական կուսակցություն, դրանցից միայն հինգն է կին ղեկավարում: Կանանց գլխավորած կուսակցությունները նկատելի դեր չեն խաղում հանրապետության քաղաքական դաշտում, և դրանցից միայն մեկն է մասնակցել 2007 թվականի Ազգային ժողովի ընտրություններին:

Կոնվենցիայի կոմիտեն իր հանձնարարականներում մտահոգություն է հայտնել քաղաքական կուսակցություններում կանանց ցածր ներկայացվածության առնչությամբ (մինչև 20%): Իրավիճակը փոխվել է, և մի շարք առավել հայտնի քաղաքական կուսակցություններում կանայք միջին հաշվով կազմում են 38%: Կուսակցություններում կանանց ներկայացվածության և ակտիվության վերլուծությունը բացահայտել է մի շարք օրինաչափություններ: Թեև հանրապետության շատ քաղաքական կուսակցությունների



կազմը քանակական առումով գենդերայնորեն հավասարակշռված է, կուսակցությունների ղեկավարների շարքում կանանց տեսակարար կշիռը չի համապատասխանում շարքային անդամների թվում կանանց տեսակարար կշիռն: Կանայք թերի են ներկայացված կուսակցական որոշումների ընդունման մակարդակում և չեն ազդում ներկուսակցական ժողովրդավարության զարգացման վրա:

Կանանց ակտիվությունը կուսակցություններում կտրուկ մեծանում է ընտրարշավների ընթացքում, սակայն նրանց կուտակած փորձը որևէ ազդեցություն չի ունենում կուսակցական ընտրացուցակներում կանանց ներկայացվածության վրա: Գենդերային հիմնախնդիրները տեղ չեն գտնում քաղաքական կուսակցությունների ծրագրերում, կանանց խնդիրները դիտվում են սուկ ընտանիքի, մայրության և մանկության համատեքստում:

Որոշ կուսակցություններում ձևավորված կանանց խորհուրդները դեռևս չեն դարձել կանանց հաջող քաղաքական առաջխաղացման դայրոց: Կուսակցություններում կանանց կադրերի պատրաստման և առաջնդման համակարգ չի ձևավորվել, կուսակցությունների մեծ մասը իրենց անդամների կուսակցական ուսուցման հարցերը լուծում է առանց գենդերային բաղադրիչը հաշվի առնելու, գենդերայնորեն չեզոք հիմքի վրա: Կանանց կադրերի պատրաստման համակարգի բացակայությունը շատ քաղաքական կուսակցությունների համար լուրջ հիմնախնդիր դարձած փորձառու և գրագետ կադրերի սղության բաղկացուցիչ մասն է, որի հետևանքով նրանց կողմից քաղաքական պաշտոններում առաջադրվող կադրերը, այդ թվում նաև կանայք, երկար չեն մնում իրենց պաշտոնում:

Կանայք հասարակական սեկտորում: Մի շարք հարցախույզների⁴³ տվյալները ցույց են տալիս, որ հանրապետության հասարակական սեկտորում կանանց կազմակերպությունները առավել ակտիվ գործող հատվածն են ներկայացնում: Հարցվողներն առավել արդյունավետ գործող կազմակերպությունների շարքում առաջին տեղում նշում են բարեգործական կազմակերպությունները, այնուհետև՝ կանանց կազմակերպությունները, ինչը խոսում է հասարակությունում վերջիններիս ճանաչված լինելու մասին:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տվյալների՝ 1991 թվականից մինչև օրս Հայաստանում գրանցվել է ավելի քան 4500 հասարակական կազմակերպություն, որոնցից, տարբեր փորձագետների գնահատականներով, ակտիվ և համեմատաբար ակտիվ է գործում մոտ 700 կազմակերպություն: Դրանցից մոտավորապես 60-ը կանանց կազմակերպություններ են, ընդ որում այդ կազմակերպությունների 30%-ը գործում է հանրապետության տարածաշրջաններում: Հաշվի առնելով, որ կանայք կազմում են Հայաստանի բնակչության 51,8%-ը, կարելի է արձանագրել, որ հասարակական շարժման մեջ ընգրկված է կանանց շատ փոքր տոկոսը:

43 **Выборы и демократия: фактор гражданского общества** /Ассоциация женщин с университетским образованием. Ереван, 2003.



Հասարակական սեկտորի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու կանանց կազմակերպությունների գործունեության 4 հիմնական ուղղություն. հասարակական-քաղաքական հիմնախնդիրներ և կանանց իրավունքների ու շահերի պաշտպանություն, աջակցություն կանանց գործնական ակտիվության և մասնագիտական գործունեության ընդլայնմանը, սոցիալական ծառայությունների մատուցում և բարեգործություն, պայքար կանանց նկատմամբ բռնության վերացման համար:

Հայաստանում կանանց հասարակական սեկտորի զարգացման արդի փուլը բնութագրվում է կանանց ՀԿ-ների աշխարհագրության և գործունեության ոլորտների ընդլայնմամբ, կանանց միջազգային շարժման հիմնախնդիրների ընդգրկման ավելի բարձր մակարդակով: Բարձրացել է կանանց կազմակերպությունների գործունեության մասնագիտական մակարդակը, դա տեղի է ունեցել նաև հանրապետությունում առկա գիտական կադրերի հզոր ներուժի ներգրավման հաշվին: Կանանց կազմակերպություններն այսօր առաջատար են գենդերային հետազոտությունների ոլորտում, իրականացնում են իրավական և գենդերային կրթություն, զբաղվում գենդերային դասընթացների մշակմամբ և դրանց ներդրմամբ հանրապետության միջնակարգ և բարձրագույն կրթության համակարգում: Վերջին տարիների իրողություններից մեկն էլ կանանց լիդերության դպրոցների և քաղաքական դասընթացների կազմակերպումն է ՀԿ-ների և քաղաքական կուսակցությունների կին լիդերների և ակտիվիստների համար:

Կոնվենցիայի կոմիտեն իր հանձնարարականներում մտահոգություն է հայտնել կոնվենցիայի կիրարկման ուղղությամբ կանանց ՀԿ-ների և պետական կառույցների սահմանափակ համագործակցության առիթով: Հաշվետու ժամանակաշրջանում կանանց շատ կազմակերպություններ իշխանության հետ սոցիալական գործընկերության փորձ են կուտակել, հասարակության մեջ կշիռ և հեղինակություն են ձեռք բերել, կան սոցիալական ծրագրերի իրականացման գործում կառավարության հետ գործընկերության օրինակներ, և որոշակի շարժ է նկատվում գենդերային հավասարության ապահովման միջազգային պարտավորությունների կատարման ուղղությամբ: Սակայն սոցիալական պատվերի, լոբբինգի, բարեգործության մասին օրենքների և կարգավորող նորմատիվ-իրավական այլ փաստաթղթերի բացակայության պայմաններում իշխանություն-ՀԿ սոցիալական գործընկերությունը՝ որպես ինստիտուտ, դեռևս չի կայացել: Հասարակական սեկտորն առայժմ չի կարող հույս դնել պետական աջակցության վրա և իր նախաձեռնությունների մեծ մասն իրականացնում է միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

Ներկա փուլում կանանց կազմակերպությունները դեռևս ինստիտուցիոնալ առումով չեն ձևավորվել որպես կանանց շարժում. չի ձևավորվել ակտիվ գործող կանանց կազմակերպությունների կրիտիկական զանգվածը, չկա նրանց գործունեության համախմբում, մշակված չէ համատեղ գործողությունների հստակ ծրագիր, և միշտ չէ, որ ապահովվում է նրանց ինքնավարությունն ու անկախությունը պետական կառույցներից, ազդեցիկ քաղաքական, տնտեսական և այլ ուժերից:



Հայաստանի կանանց կազմակերպությունները դեռևս չեն դարձել հասարակական գործընթացների վրա նշանակալի ազդեցություն գործող ուժ: Կանանց շատ կազմակերպությունների ղեկավարների գնահատաններով, տեղի ունեցող քաղաքական գործընթացների և իրականացվող բարեփոխումների քաղաքականության վրա նրանց ազդեցության աստիճանը նվազագույն է: Կանանց կազմակերպությունների մի մասը խուսափում է քաղաքական հարցեր բարձրացնելուց և լուծելուց:

Երաշխավորություններ.

ՀՀ կառավարությանը.

- գործադիր իշխանության ղեկավար պաշտոններում մրցակցային եղանակով կադրերի ընտրության և նշանակման գործում ներդնել «կանանց աջակցող դրական միջոցներ»,
- իրականացնել կառավարման և որոշումների ընդունման համակարգում կանանց առաջխաղացման ուղղությամբ «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրով» նախատեսված միջոցառումների իրականացման մշտական վերահսկողություն ու գնահատում, պարբերաբար ուսումնասիրել պետական ծառայողների գենդերային բաշխումն՝ ըստ դասային պաշտոնների,
- Քաղաքացիական ծառայության խորհրդի շրջանակներում ստեղծել կանանց պահուստային կադրերի տվյալների շտեմարան, Պետական կառավարման ակադեմիայի միջոցով վարչական կադրերի պատրաստման համակարգում ներդնել գենդերային բաղադրիչը:

Ազգային վիճակագրության ծառայությանը.

- ընդլայնել գենդերային վիճակագրության մեթոդների և միջազգային գենդերային ցուցանիշների, մասնավորապես կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշի օգտագործումը՝ կանանց առաջընթացի մշտական գնահատում իրականացնելու համար:

ՀՀ Ազգային ժողովին.

- Օրենսդիր իշխանության մակարդակում գենդերային հավասարակշռությունն ապահովելու համար ընտրությունների մասին օրենքով նախատեսված ժամանակավոր քվոտաները հասցնել մինչև 25%-ի:

Քաղաքական կուսակցություններին.

- ձևավորել մեխանիզմներ կանանց պահուստային կադրերի պատրաստման և կուսակցությունների ղեկավար կառույցներում նրանց առաջխաղացումը ապահովելու համար:



ՄԱՍ 3

Հոդված 10

Խտրականության վերացումը կրթության ոլորտում

Հիմնախնդիրները.

- Ընդհանուր լրիվ միջնակարգ կրթության համակարգում աղջիկների ընդգրկվածության նվազման որոշակի վտանգի առկայությունը:
- Ըստ մասնագիտությունների գենդերային խտրագատությունը բուռն է:
- Կանանց ոչ բավարար մասնակցությունը կրթական քաղաքականության մշակմանը և իրականացմանը:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է հիմնական ընդհանուր պարտադիր և անվճար կրթությունը: Դպրոցահասակ երեխաների ճնշող մեծամասնությունը՝ անկախ սեռից, հնարավորություն ունի իրականացնելու այս սահմանադրական իրավունքը: Այսպես, 2003-2004 ուսումնական տարում աղջիկները կազմում էին պետական հանրակրթական դպրոցների սովորողների ընդհանուր թվի 49,4%-ը, 2005-2006 ուսումնական տարում՝ 49,2%-ը: 2005-2006 ուսումնական տարում աղջիկները տարրական դասարանների աշակերտների ընդհանուր թվի 47,8%-ն էին կազմում, 4-8-րդ դասարանների սովորողների թվում՝ 48,8%-ը: Նույն ուսումնական տարում բարձր դասարաններում աղջիկները կազմում էին սովորողների ընդհանուր թվի 51,3%-ը, ինչը համապատասխանում է նրանց տեսակարար կշռին տվյալ տարիքային խմբերի կազմում⁴⁴:

Ըստ 2001 թվականի մարդահամարի տվյալների՝ Հայաստանի բնակչության գրագիտության մակարդակը կազմել է 99,5%⁴⁵: Այդուհանդերձ վերջին տարիներին մեծացել է հանրակրթության համակարգում երեխաների, այդ թվում աղջիկների ընդգրկվածության նվազման վտանգը: Այս միտումը նկատելի է արդեն տարրական դպրոցում, ընդ

44 www.armstat.am. 2006 թ. վիճակագրական տեղեկագիր:

45 Տե՛ս՝ www.armstat.am, աղյուսակ 3.1 «Մշտական բնակչությունը (քաղաքային, գյուղական) ըստ կրթության մակարդակի, սեռի և տարիքի»:



որում այն մարզային կտրվածքով մեծ տատանումներ ունի: Այսպես, Լոռու մարզում տարրական դպրոցներում աղջիկների ընդգրկվածությունը կազմում է 86,4%, Կոտայքի մարզում՝ 88,8%: Լոռու մարզում աղջիկների 13,6%-ը, Արարատի մարզում՝ 12,5%-ը, Կոտայքի մարզում՝ 11,2%-ը, Արագածոտնի մարզում՝ 9%-ը, Վայոց ձորի մարզում՝ 8,3%-ն ընդգրկված չեն տարրական դպրոցում⁴⁶: Դա մեծացնում է կանանց անգրագիտության ձևավորման, աղքատության խորացման և մարզինալացման հնարավոր վտանգը:

Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալները հնարավորություն չեն տալիս որոշելու հիմնական դպրոցը չավարտող աղջիկների տեսակարար կշռի շարժընթացը՝ տղաների համեմատությամբ: Սակայն, ըստ 2004 թ. տվյալների, աղջիկները կազմել են հիմնական դպրոցը չավարտած երեխաների ընդհանուր թվի 28%-ը⁴⁷: Բարձր դասարաններում դպրոց չհաճախելը հիմնականում պատճառաբանվում է հետևյալ հանգամանքներով. ցանկության բացակայություն (47%), վատ սոցիալ-տնտեսական պայմաններ (3%), ծնողները թույլ չեն տալիս (2,5%)⁴⁸: Այլ պատճառների շարքում կարող են լինել նաև երեխաների աշխատանքի օգտագործումը սեփականաշնորհված հողակտորներում, համակարգի օպտիմալացման հետևանքով բնակության վայրից դպրոցի զգալի հեռավորությունը (սա առանձնապես վերաբերում է գյուղական բնակավայրերին) և այլն:

Դպրոցների օպտիմալացման ծրագրի իրականացման արդյունքում, սկսած 2003-2004 ուսումնական տարվանից, քաղաքներում կրճատվել է 72 դպրոց, գյուղական բնակավայրերում՝ 29 դպրոց: Այսպիսով հանրակրթական դպրոցների թիվը կրճատվել է 6,8%-ով (քաղաքներում՝ 11,9%, գյուղական շրջաններում՝ 3,3%): Քանի որ միջնակարգ դպրոցների մանկավարժների կազմում կանանց տեսակարար կշիռը 83% է, կրճատումներից տուժել են հատկապես կանայք:

Ըստ 2004 թ. տվյալների՝ ՀՀ-ում չեն գործել 104 պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Նախադպրոցական կրթության համակարգում կանանց զբաղվածությունը գրեթե հասնում է 100%-ի, ուստի մեծ թվով մանկական նախադպրոցական հիմնարկների փակումը հանգեցրել է կանանց աշխատատեղերի կորստյան, այս տիպի ուսումնական հաստատություններում երեխաների ընդգրկվածության նվազման և մայրերի՝ աշխատելու հնարավորությունից զրկվելուն⁴⁹:

Մեծացել է աղջիկների ընդգրկվածությունը միջին և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում: Այսպես, եթե 2002-2003 ուսումնական տարում պետական

46 ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գեներալային վերլուծություն / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Եր., 2006, էջ 24:

47 Հաշվարկված է ըստ «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004 թվականին և դինամիկ շարքեր» վիճակագրական ժողովածուի տվյալների, Երևան, 2005, էջ 26:

48 Նույն տեղում, էջ 25:

49 Նույն տեղում, էջ 11:



միջին մասնագիտական հաստատություններում աղջիկները կազմում էին սովորողների ընդհանուր թվի 67%-ը, իսկ ոչ պետականներում՝ 75,6%-ը, ապա 2004-2005 ուսումնական տարում՝ համապատասխանաբար 67,9 և 81,4%-ը: Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում 2002-2003 ուսումնական տարում աղջիկները կազմում էին ուսանողների ընդհանուր թվի 49,7, իսկ ոչ պետականներում՝ 67,1%-ը, 2004-2005 ուսումնական տարում համապատասխանաբար՝ 52,2 և 67,8%-ը⁵⁰:

Հայաստանում բարձրագույն կրթություն ունեցող անձանց թվաքանակում կանայք կազմում են 58%⁵¹: Ազգային վիճակագրական ծառայության 2005-2006 ուսումնական տարվա տվյալների համաձայն՝ աղջիկները գերազանցել են պետական բուհերի գրեթե բոլոր մասնագիտություններում, բացի իրավաբանական (35%), գյուղատնտեսական (30%), տրանսպորտի և կապի (13%), արդյունաբերության և շինարարության (27%) մասնագիտություններից: Հայաստանում չեն իրականացվում աղջիկների և կանանց՝ իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտության ընտրությունը խրախուսող ծրագրեր, սակայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում վերը նշված մասնագիտություններով գենդերային խտրազատության մակարդակը նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ փոքր-ինչ կրճատվել է: Ոչ պետական բուհերում աղջիկների թիվը բոլոր մասնագիտություններում, նույնիսկ ավանդաբար տղամարդկանց մասնագիտություն համարվող, գերազանցում է, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ ոչ պետական բուհերի ուսանողները չեն ստանում բանակում ծառայելու տարկետում (իրավաբանական ֆակուլտետներում ուսանողների ընդհանուր թվի 50%-ը, արդյունաբերության և շինարարության ֆակուլտետներում՝ 69%-ը աղջիկներ են)⁵²:

Հետբուհական կրթության համակարգում՝ ասպիրանտուրայում, աղջիկները 2002 թվականին կազմում էին սովորողների 34,3%-ը, 2004 թվականին՝ 36,4%-ը, իսկ դոկտորանտուրայում՝ համապատասխանաբար 21,4 և 26,7%-ը: Գիտությունների թեկնածուների ընդհանուր թվում կանայք 2001 թ. կազմում էին 34%, 2004 թ.՝ 40,5%, 2001 թ. կանայք գիտությունների դոկտորների 17%-ն են կազմել, 2004 թ.՝ 16,6%-ը⁵³:

Կրթության համակարգը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և Բոլոնյան գործընթացին միանալու նպատակով վերջին տարիներին իրականացվող բարեփոխումների պայմաններում կանայք բավարար չափով չեն մասնակցում կրթական

50 Տե՛ս 2003 և 2006 թթ. ՀՀ վիճակագրական ժողովածուները:

51 «Գենդերային իրավիճակը Հայաստանում. փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը հազարամյակի նպատակների համատեքստում», /Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2005., էջ 45:

52 Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2005 թվականին և դիմամիկ շարքեր: Վիճակագրական ժողովածու: Երևան, 2006:

53 Հաշվարկվել է ըստ «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004 թվականին և դիմամիկ շարքեր» վիճակագրական ժողովածուի տվյալների, Երևան, 2005, էջ 122:



քաղաքականության պլանավորմանը և իրականացմանը: ՀՀ կրթության և գիտության նախարարության ղեկավար պաշտոններում (նախարար և երեք փոխնախարար) կանայք չկան: Նախարարի աշխատակազմի աշխատանքն ապահովող քաղաքացիական ծառայողների 58%-ը կանայք են, սակայն նրանց զբաղեցրած պաշտոնները իրականում հնարավորություն չեն տալիս ազդելու կրթության ոլորտի քաղաքականության վրա, ինչը համարժեք չէ այնպիսի ֆեմինացված համակարգին, ինչպիսին է կրթությունը: Պետական բուհերի ռեկտորներից միայն մեկն է կին: 77 ոչ պետական բուհերից միայն 15-ն են ղեկավարում կանայք⁵⁴:

Երաշխավորություններ.

Կրթության և գիտության նախարարությանը.

- մշակել և իրականացնել ընդհանուր լրիվ միջնակարգ կրթության համակարգում աղջիկների ընդգրկվածության անկման վտանգների նվազեցմանն ուղղված միջոցներ,
- անցկացնել սեմինարներ ծնողական համայնքների համար, ընտանիքներում իրականացնել անհատական բացատրական աշխատանք նրանց երեխաների ապագայի համար կրթության կարևորության վերաբերյալ,
- մշակել աջակցման ծրագրեր աղջիկների կողմից տեխնիկական և բնագիտական մասնագիտությունների ընտրությունը և հետագայում գիտության ոլորտում իրենց գործունեությունը շարունակելու ցանկությունը խրախուսելու ուղղությամբ,
- շարունակել իրազեկության բարձրացման, ընտանիքում և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց դերի և պարտականությունների վերաբերյալ գենդերային կարծրատիպերի փոփոխման նպատակով գենդերային կրթության ինստիտուցիոնալացմանն ուղղված աշխատանքը:

Հոդված 11

Ջրադրվածության ոլորտում կանանց նկատմամբ խտրականության վերացումը

Հիմնախնդիրները.

- **Հորիզոնական և ուղղահայաց խտրագատությունը զբաղվածության ոլորտում:**
- **Կանանց մասնագիտական աճի սահմանափակ հնարավորությունները:**

Կոնվենցիայի կոմիտեն իր հանձնարարականներում ուշադրություն է դարձրել հանրապետությունում գործազրկության բարձր մակարդակի, աշխատանքի ընդունվելիս

54 **Գենդերային իրավիճակը Հայաստանում. փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը հազարամյակի նպատակների համատեքստում** / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2005, էջ 49:



հավասար հնարավորությունների բացակայության և զբաղվածության ոլորտում ըստ սեռի տարաբաժանված տեղեկատվության բացակայության վրա:

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, կանայք կազմում են պաշտոնապես գրանցված **գործազուրկների 71,2%-ը**: «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում պաշտոնապես գրանցված և աշխատանք փնտրող մարդկանց թիվը 2006 թ. օգոստոսի վերջին կազմել է 110,7 հազար, որոնց 98,9%-ը կազմել են չզբաղվածները: Աշխատուժի պաշտոնական առաջարկը կազմել է 107 չզբաղված 1 թափուր տեղի համար, ընդ որում թափուր տեղերի ճնշող մեծամասնությունը բանվորական ոլորտում է: Սակայն Զբաղվածության ծառայության տվյալները չեն կարող արտացոլել թաքնված գործազրկությունը, այդ թվում՝ կանանց: Աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալներով, Հայաստանում գործազրկությունը 2003 թվականին կազմել է 31,2%:

Հետագա տարիների շարժընթացը ցույց է տալիս, որ չնայած կանանց շրջանում, տղամարդկանց համեմատ, զբաղվածության մակարդակի որոշակի բարձրացմանը և գործազրկության կրճատմանը, ավելի ցայտուն դրական միտում և առաջանցիկ համապատասխան ցուցանիշներ են դիտվում տղամարդկանց շրջանում: Ըստ վիճակագրական տվյալների, պաշտոնական գործազրկության մակարդակը 2005 թվականին կազմել է 12,7%: Հանրապետությունում 2005 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ զբաղվածության ծառայություններում գրանցվածների ընդհանուր թիվը կազմել է 91,7 հազար մարդ, որոնցից 64,6 հազարը կամ 70,4%-ը կանայք են, առավել բարձր տոկոս են կազմել քաղաքաբնակ կանայք՝ 94,5%: Մեծ մտահոգություն է առաջացնում մեկ տարուց ավելի գործազուրկի կարգավիճակ ունեցող կանանց թիվը՝ (80,2%):

1998-2005 թթ. ժամանակահատվածում զբաղվածության ծառայությունները աշխատանքի են տեղավորել ընդամենը 33543 կնոջ: Բարդ իրավիճակ է ստեղծվել 50 տարեկանից բարձր կանանց աշխատանքի տեղավորման հարցում, քանի որ նրանք երկարատև գործազրկության հետևանքով կորցրել են որակավորումը և աշխատանքի տեղավորվելու համար ոչ միայն մասնագիտական ուսուցման, այլև հաճախ բարոյական և հոգեբանական աջակցության և վերականգնման կարիք ունեն:

Պահանջարկի և առաջարկի անհամապատասխանության մակարդակը կրճատելու նպատակով 1998-2005 թթ. ընթացքում կազմակերպվել են հաշվապահական հաշվառման, փոքր բիզնեսի կազմակերպման, ֆերմերային գործի, համակարգչային դիզայնի և գործավարության, թանկարժեք քարերի մշակման, ռեֆերենտ-օգնականի դասընթացներ, ուսուցում դերձակի, գորգագործի, վաճառողի, դայակ-դաստիարակչուհու և վարսավիրի մասնագիտությունների գծով, որոնց մասնակցել է ընդամենը 2541 կին: Ընդ որում մասնագիտական ուսուցման դասընթացների ծրագրերում մասնակցել ցանկացողների 95%-ը կազմում են կանայք: Ըստ վիճակագրական տվյալների՝ վերապատ-



րաստման շնորհիվ 2004 թ. համեմատ 2005 թ. կանանց զբաղվածության մակարդակը աննշան չափով է բարձրացել՝ 86,3%-ից մինչև 87,3%, իսկ պաշտոնական գործազրկության մակարդակը 13,7%-ից նվազել է մինչև 12,7%:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները⁵⁵, աշխատանքի շուկայում կանանց մրցունակ չլինելու և խտրականության ենթարկվելու պատճառներից են կանանց համար ֆինանսական, վարկային, գույքային ինստիտուտների, սեփականության, հողի ոչ բավարար մատչելիությունը, գործնականում նրանց օտարումը սեփականաշնորհման արդյունքներից, կանանց դուրսմղումը տնտեսության համեմատաբար եկամտաբեր ճյուղերից, սոցիալական և իրավական անպաշտպանվածությունը: 2003 թ. տվյալներով, զբաղվածների ընդհանուր թվում վարձու աշխատողի կարգավիճակ ունեւ կանանց 48%-ը, ինքնազբաղվածների կարգավիճակ՝ 34%-ը, գործատուի կարգավիճակ՝ 16%-ը, իսկ տղամարդկանց շրջանում՝ համապատասխանաբար 52, 66 և 84%-ը:

ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը: ՀՀ «Աշխատանքի վարձատրության մասին» օրենքում (2001 թ.) դե յուրե արգելված է խտրականությունը աշխատավարձի ոլորտում: Սակայն դե ֆակտո *աշխատանքի շուկայում ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և սեկտորների) խտրազատության հետևանքով*, աշխատող կնոջ միջին ամսական աշխատավարձը 2006 թվականին կազմել է տղամարդու աշխատավարձի 53%-ը: Ընդամին հարկ է նշել, որ սա 2003 թվականի համեմատությամբ դրական շարժընթաց է, երբ գենդերային խզումը տղամարդկանց և կանանց աշխատանքի վարձարության միջև կազմում էր 39%:

Աշխատանքի վարձատրության մեջ գենդերային խզումը հիմնականում (բայց ոչ միայն) կանանց խտացման հետևանք է ցածր վարձատրվող, դուտացիոն ճյուղերում՝ առողջապահության, կրթության, գիտության: Ավելի բարձր վարձատրվող ճյուղերում, ինչպիսին է բանկային գործը, որտեղ աշխատավարձը 3,3 անգամ գերազանցում է ամբողջ տնտեսության միջին ցուցանիշը, կանանց միջին ամսական աշխատավարձը տղամարդկանց աշխատավարձի կեսից էլ ցածր է եղել՝ 47%: Հարկ է նշել, որ մասնագիտական խտրազատության փոփոխությունները տեղի են ունենում նաև կանանց համար «ոչ շահավետ» ուղղություններով. այսպես, վերջին տարիներին տղամարդկանց նկատելի ներհոսքը ավանդաբար կանացի համարվող ծառայությունների ոլորտ կատարվում է այս ոլորտում բարձրացված աշխատավարձի պատճառով, իսկ բարձր վարձատրվող

55 *Գենդերային իրավիճակը Հայաստանում. փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը հազարամյակի նպատակների համատեքստում*, /Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2005: Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ/ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2006, էջ 6:



բանկային ոլորտում, հակառակը, տեղի է ունենում կանանց դուրսմղում: Կանայք պահանջված չեն շինարարությունում, քիչ են պահանջված տրանսպորտի, կապի, էլեկտրաէներգետիկայի ոլորտներում, կրճատվել է կանանց տեսակարար կշիռը արդյունաբերության մեջ: Կանանց զբաղվածությունը կրճատվել է նաև առևտրում, բնակարանային-կոմունալ տնտեսությունում, վարկավորման և ապահովագրության ոլորտում, այսինքն՝ զբաղված կանանց թիվը հակադարձ համեմատական է բարձր աշխատավարձին: Հայաստանում կանանց աշխատանքը հիմնականում օգտագործվում է ցածր աշխատավարձով ոլորտներում՝ առողջապահության, կրթության, հասարակական սննդի:

Բնութագրական է նաև գենդերային խտրագատությունը՝ կախված սեփականության ձևից: Այսպես, պետական սեկտորում, որտեղ աշխատավարձը ցածր է, ավելի շատ կին է զբաղված, քան տղամարդ: Տղամարդկանց և կանանց զբաղվածության կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատանքի վարձատրության գենդերային տարբերությունները խորանում են աշխատանքի շուկայի ցածր վարձատրվող սեգմենտներում կանանց գերակշռությամբ և մեղմվում են կանանց կրթվածության բարձր մակարդակով, որը նպաստում է աշխատավարձում խզման կրճատմանը: Այդ տարբերությունները ոչ այլ ինչ են, քան թաքնված խտրականություն զբաղվածության և աշխատավարձի ոլորտում: Մասնագիտական և առաջխաղացման խտրագատության առկայությունը արտացոլում է հասարակության մեջ գերակշռող գենդերային կարծրատիպերը տղամարդկանց և կանանց սոցիալական դերերի մասին, որոնք բացասաբար են ազդում տնտեսության կառուցվածքի վրա, գենդերային անհավասարակշռություն են առաջացնում և ամրապնդում թաքնված խտրականությունը:

Հայաստանում կանանց գլխավոր հիմնախնդիրը ոչ այնքան աշխատատեղերի մատչելիությունն է, որքան **խտրականությունը աշխատանքի** ընդունվելիս, երբ նրանք, չնայած կրթվածության և որակավորման բարձր մակարդակին, լիովին կախված են գործատուի նախասիրություններից: Կանանց հետ հիմնականում կարճաժամկետ պայմանագրեր են կնքվում, նրանք զբաղված են լինում ոչ լրիվ աշխատանքային օրով, ավելի հաճախ են տեղավորվում ժամանակավոր աշխատանքի, նրանց առաջին հերթին են ազատում աշխատանքից կամ կրճատում, մեծ մասամբ առանց որոշակի պատճառի: Այլընտրանքի բացակայության պայմաններում մարդիկ գիտակցաբար համաձայնում են կրճատ աշխատանքային օրվա ռեժիմին: Այսպես, առողջապահության ոլորտում օպտիմալացման արդյունքում կես դրույքով ձևակերպված կին բժիշկների զգալի մասը շարունակում է աշխատել լրիվ աշխատանքային օրով:

Թեև վերջին 10 տարիների ընթացքում մասնագիտությունների մեծ մասի գծով աշխատանքի տեղավորման բարդությունը գործնականում անփոփոխ է մնում, գործատուները, օգտվելով ստեղծված իրավիճակից, ներկայացնում են մասնագիտական պատրաստվածության մակարդակի չափազանց բարձր, տնտեսապես չարդարացված պահանջներ: Աշխատատեղերին հավակնողների ավելցուկը հնարավորություն է տվել



խստացնելու մասնագետների ընտրությունը, ձեռնարկատերերը սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել մասնագետի ավարտած բուհի վարկանիշին, օտար լեզվի իմացությանը, համակարգչային հմտություններին, տարիքին և շատ հաճախ՝ արտաքինին:

Մինչև վերջին ժամանակներս **կանանց տնային** աշխատանքը քանակական գնահատական չէր ստանում և չէր արտացոլվում ազգային վիճակագրական տվյալներում: Աշխատանքի վրա ծախսվող ժամանակի կառուցվածքի ուսումնասիրությունը շատ կարևոր է զբաղվածության հավասար բաշխման, երկրի տնտեսական և հասարակական կյանքում տղամարդկանց և կանանց ավանդի գնահատման, տնային և երեխաների խնամքի հետ կապված պարտականությունների հավասար բաշխման հարցում: Մոցի-ուդգիական հարցումների տվյալները վկայում են, որ կանանց 26%-ը և տղամարդկանց 16%-ը կրկնակի զբաղվածությունը համարում են կանանց քաղաքական և մասնագիտական կարիերան խոչընդոտող հիմնական գործոնը⁵⁶:

Վերջին ժամանակներս որոշ դրական տեղաշարժեր են նկատվում զբաղվածության և տնային աշխատանքի գնահատման գենդերային հայեցակետերի ուսումնասիրման գործում: 2005 թ. Ազգային վիճակագրական ծառայությունը Միջազգային զարգացման շվեդական գործակալության ֆինանսական աջակցությամբ իրականացրել է Հայաստանում ժամանակի բյուջեի հետազոտում: Ուսումնասիրությունը ներկայացրել է վարձատրվող և չվարձատրվող (տնային) աշխատանքի վրա տղամարդկանց և կանանց ծախսած ժամանակի մանրամասն պատկերը և բացահայտել, որ կանայք 5 անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում տնային աշխատանքի վրա, քան տղամարդիկ: Տղամարդկանց և կանանց աշխատանքի բաշխման կառուցվածքի տվյալ ուսումնասիրությունը կարելի է համարել առաջին քայլը կանանց և տղամարդկանց աշխատանքային և ընտանեկան պարտավորությունների հաշվեկշռված բաշխմանը նպաստելու կապակցությամբ միջազգային փաստաթղթերի, այդ թվում և Կոնվենցիայի հանձնարարականների իրականացման գործում: Փորձագետներն իրենց եզրահանգումներում առանձնացնում են ոչ միայն ժամանակի ընդհանուր բյուջեում կանանց տնային աշխատանքի գնահատման խնդիրը, այլև պետական մակարդակում, մասնավորապես կանանց կենսաթոշակային ապահովման հարցում դրանց հաշվառմանն ուղղված որոշակի միջոցների անհրաժեշտությունը:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- մշակել միջոցներ, որոնք երաշխավորում են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները բանկային փոխառություններ և վարկեր ստանալիս, խրախուսել այն

56 Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. գենդերային հավասարության չափումը / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2006:



ֆինանսական հաստատություններին, որոնք արտոնյալ վարկեր են տրամադրում կանանց կամ սպասարկում են կանանց դեկավարած փոքր և ցածր շահութաբեր ձեռնարկությունները,

- մշակել կանանց ձեռնարկատիրությունը խթանող հատուկ ծրագրեր, մշակել սոցիալ-տնտեսական բնույթի միջոցներ՝ ուղղված ներդրումային քաղաքականության կատարելագործմանը, այն ճյուղերի առաջնահերթ զարգացմանը, որոնք կօգնեն առավել արդյունավետ լուծել տնտեսական զարգացման խնդիրները՝ հաշվի առնելով այն օժանդակ արտադրությունների ստեղծումը, որոնք նախատեսվում են կանանց զբաղվածության համար, ներառյալ տնայնագործությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ աշխատանքը,
- հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական գործընկերության շրջանակներում մշակել և իրականացնել որոշակի միջոցներ՝ ուղղված կանանց տնտեսական-իրավական գրագիտության բարձրացման նպատակով մատուցվող խորհրդատվությունների, բիզնես-կրթական ծրագրերի ընդլայնմանը, ինչպես նաև սեփական տնտեսական իրավունքների մասին կանանց իրազեկության մակարդակի բարձրացմանը՝ զբաղվածության ոլորտում և ռեսուրսների ըստ սեռի հատկանիշի բաշխման հարցում խտրականության փաստերի վերացման նպատակով:

Հոդված 12

Խտրականության վերացումը առողջապահության ոլորտում

Հիմնախնդիրները.

- Կանանց համար որակյալ բժշկական ծառայությունների անմատչելիությունը, այդ թվում վերարտադրողական առողջության ապահովման ոլորտում:
- Անիրազեկությունը ընտանիքի պլանավորման ժամանակակից մեթոդների մասին:
- Ծնելիության ցուցանիշների նվազումը և մահացության ցուցանիշների մեծացումը:

Կոնվենցիայի կոմիտեի 2002 թվականի հանձնարարականներում մտահոգություն է հայտնվում կանանց համար առողջապահության ոլորտի անբավարար մատչելիության և կանանց առողջության հետ կապված իրավիճակի, մայրական մահացության ավելացման և արդրոսների՝ որպես ծնելիության վերահսկողության հիմնական միջոցի, լայն կիրառման առնչությամբ:

Հանրապետության կառավարությունը հաստատել է 2003-2008 թթ. առաջնային առողջության պահպանման ռազմավարությունը: Առողջապահության բարեփոխման և զարգացման քաղաքականությունը մշակելիս կառավարության ուշադրության կենտրոնում են եղել մոր և մանկան առողջության ապահովման հարցերը: Անցած տարիների ընթացքում ընդունվել են ՀՀ «Մարդու վերարտադրողական առողջության



և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքը (2002 թ.), ՀՀ կառավարության որոշումը «2003-2015 թթ. մայրական և մանկական առողջության պահպանման ռազմավարությունը հաստատելու մասին», «Վերարտադրողական դոնորների, ինչպես նաև վերարտադրողական դոնոր չհանդիսացող քաղաքացիների կողմից սեռական բջիջների հատկացման և հատկացված սեռական բջիջների և սաղմերի պահպանման կարգը և պայմանները հաստատելու մասին» (2003 թ.), ՀՀ կառավարության որոշումը «Հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները հաստատելու մասին» (2004 թ.):

Առողջապահական գործակալության՝ բյուջետային ֆինանսավորման ծախսման մասին տվյալներով, 2004 թ. պետպատվերի շրջանակներում անվճար հիվանդանոցային բժշկական օգնության մատուցման համար ծախսված ողջ գումարի 42%-ն է միայն հատկացվել կանանց բուժման համար: Սոցիալապես անապահովների և բնակչության հատուկ խմբերում ընդգրկվածների անվճար հիվանդանոցային բժշկական օգնության ապահովման համար ծախսված գումարից կանանց բաժին է ընկել միայն 38%-ը⁵⁷: Այսպիսով, չհաշված պետության՝ կանանց վերարտադրողական գործառույթների ապահովման հետ կապված ծախսերը, առողջապահության ընդհանուր ծառայություններից կանայք ավելի հազվադեպ են օգտվում, և նրանց բուժման համար ավելի քիչ է ծախսվում, քան տղամարդկանց բուժման համար:

Առողջապահության համակարգի օպտիմալացման ընթացքում պահպանվել են բոլոր ծննդատները, գյուղական շրջանների 13 առողջության կենտրոններում պահպանվել են ծննդօգնության ծառայությունները: Հանրապետությունում մանկաբարձական-գինեկոլոգիական օգնություն են մատուցում 2 հանրապետական մասնագիտացված կենտրոններ, 10 ինքնուրույն ծննդատներ, 44 մանկաբարձական-գինեկոլոգիական ստացիոնար և ամբուլատոր բաժանմունքներ շրջանային ու քաղաքային հիվանդանոցների կազմում, 125 կանանց կոնսուլտացիաներ և կաբինետներ և 608 գյուղական բուժակային-մանկաբարձական կետեր⁵⁸: Հանրապետությունում պահպանվում է բժշկական կադրերով ընդհանուր ապահովվածության բարձր մակարդակը: Ըստ 2005 թ. տվյալների, 10000 բնակչությանը բաժին է ընկնում 38,2 բժիշկ բոլոր մասնագիտություններով, միջին բուժանձնակազմի թվաքանակը 10000 բնակչության հաշվով կազմում էր 57⁵⁹:

Լուրջ հիմնախնդիրներ կան գյուղական բնակավայրերում բժշկական օգնություն

57 Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ / Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալացիա: Երևան, 2006, էջ 141:

58 Նույն տեղում:

59 www.armstat.am, 2006 թ. վիճակագրական ժողովածու:



ցույց տալու հարցում, քանի որ ոչ բոլոր գյուղերն են ապահովված ամբուլատորիաներով⁶⁰, իսկ բնակչության ճնշող մեծամասնությունը տրանսպորտային ծախսերը հոգալու հնարավորություն չունի: Կանայք բժշկի չեն դիմում հատկապես կանացի հիվանդությունների կապակցությամբ, փաստորեն պակասում է հղի կանանց և ծննդկանների խնամքը: Հիմնախնդիրն ավելի է բարդանում՝ կապված այն հանգամանքի հետ, որ մանկաբարձ-գինեկոլոգ բժիշկներն աշխատում են շրջկենտրոններում և քաղաքային բժշկական հաստատություններում:

Այս հիմնախնդիրը լուծված է միայն որոշ տարածաշրջաններում, որտեղ արդեն աշխատում են ընտանեկան բժիշկները: Նրանք իրավունք ունեն իրականացնելու հղի կանանց և ծննդկանների խնամք և զննում, սակայն նրանց թիվը դեռևս աննշան է և չի բավարարում եղած պահանջումները: Մատուցվող բժշկական օգնության մակարդակի խիստ տարբերություն է նկատվում Երևան քաղաքի (որտեղ կենտրոնացած են բոլոր լավ հագեցած առաջատար կլինիկաները՝ բարձրորակ մասնագետներով) և երկրի մնացած տարածաշրջանների միջև:

Բնակչության ընդհանուր հիվանդացության ցուցանիշների նվազման խորապատկերում բարձրանում է առաջին անգամ ախտորոշված հիվանդացությամբ հիվանդների քանակը, որոնց թվում կանայք կազմում են 19%⁶¹: Չի նվազում մահացության ցուցանիշը:

Պետպատվերի շրջանակներում նախատեսվել է վերարտադրողական գործառույթների և մոր ու մանկան առողջության պահպանման ապահովմանն ուղղված բժշկական ծառայությունների անվճար մատուցում, Հայաստանում բոլոր ծննդաբերություններն անվճար են՝ անկախ ծննդկանի սոցիալական դրությունից և կարգավիճակից, սակայն ծննդաբերության համար հատկացվող 44000 դրամը (120-130\$) լավագույն դեպքում բավարարում է նորմալ ծննդաբերությանը, որը լրացուցիչ միջամտություն չի պահանջում: Համակարգի բարձր կոռումպացվածության պայմաններում գործնականում լայնորեն տարածված սովետային վճարումները ծանր կացության մեջ են դնում ծննդաբերող կանանց և նրանց ընտանիքներին:

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2004 թվականին Հայաստանում բնակչության բնական աճի ցուցանիշը պահպանել է դրական միտումը և 2003 թվականի համեմատությամբ մեծացել է 19,7%-ով, հիմնականում ծնունդների թվի 4,8%-ով աճի և մահացության ցուցանիշի փոքր-ինչ նվազման հաշվին:

Կանանց կյանքի միջին տևողությունը տղամարդկանց համեմատ 6 տարով ավելի է և կազմում է 76 տարի:

60 Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004 թվականին և դիմամիկ շարքեր: Վիճակագրական ժողովածու: Երևան, 2005, էջ 125:

61 www.armstat.am, 2006 թ. վիճակագրական ժողովածու:



Կանանց առողջության և բուժօգնության որակի կարևոր ցուցանիշ է մայրական մահացությունը: Ըստ կանանց վիճակի վերաբերյալ 2005 թ. ազգային զեկույցի տվյալների՝ 2002-2005 թթ. մայրական մահացության գործակիցը կազմել է 25՝ 100000 կենդանաձնի հաշվով, ընդ որում գյուղական բնակավայրերում այն ավելի բարձր է, քան քաղաքներում: Հանրապետության հեռավոր շրջաններում ծննդաբերություն է կատարվում տնային պայմաններում: Այսպես, ըստ 2004 թ. տվյալների, բժիշկները և միջին բուժանձնակազմը ընդունել են 269 ծնունդ, որոնց 75%-ը՝ առանց հետագա հոսպիտալացման ⁶²:

Մանկական մահացությունը կյանքի առաջին տարում 2005 թ. կազմել է 12,3՝1000 կենդանաձնի հաշվով, որը 0,3-ով բարձր է, քան նախորդ տարում:

2002-2004 թթ. ժամանակահատվածում կառավարությունը բժշկական ծառայությունների ընդհանուր ծախսերում ամբուլատոր բուժօգնության ծախսերի բաժնեմասը մեծացրել է՝ 27%-ից հասցնելով 38%-ի հիվանդանոցային բուժօգնության ծախսերի բաժնեմասը 57%-ից մինչև 48% նվազեցնելու հաշվին, ինչը հնարավորություն է տվել ընդլայնելու կանխարգելիչ միջոցառումների շրջանակները, ձեռնարկելու հետազոտությունների և հիվանդությունների վաղ ախտորոշման լրացուցիչ միջոցներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխաների առողջության պահպանմանը: Հզորացվել է «Առողջ հղիություն», «Հղի կնոջ ու ծննդկանի ճիշտ սնունդ», «Անձնական հիգիենա և սեռական կյանքի հիգիենա», «Նախապատրաստում կրծքով կերակրելուն», «Հետծննդյան խնամք» և այլ թեմաներով լուսավորական աշխատանքը:

2005 թ. պետպատվերի շրջանակներում ներդրվել է ռիսկային խմբի կանանց անվճար հետազոտությունը: «Առողջ մայրություն» ծրագրի շրջանակներում սկսվել է 15 տարեկան աղջիկների մասնագիտական զննման ծրագիրը՝ հաշվի առնվելով այն հանգամանքը, որ գորակոչի տարիքի տղաներն անցնում են բժշկական քննություն:

Կանանց առողջության համար առաջվա պես լուրջ խնդիր են արթոտները: Հայաստանում արթոտը անցանկալի հղիությունից ազատվելու լայնորեն տարածված մեթոդ է: Մտահոգիչ է նաև արթոտների թիվը առաջին անգամ հղիացած 15-19 տարեկան կանանց շրջանում, ինչը վկայում է, որ երիտասարդ, դեռևս չամուսնացած աղջիկները ընտանիքի պլանավորման կաբինետների տեսադաշտից դուրս են մնում: Արթոտների թիվը ֆերտիլային տարիքի (15-49 տարեկան) 1000 կնոջ հաշվով 2001 թվականի 9,2-ից 2005 թ. հասել է մինչև 11,9-ի ⁶³:

62 Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004 թվականին և դիմամիկ շարքեր: Վիճակագրական ժողովածու: Երևան, 2005, էջ 133:

63 www.armstat.am, 2006 թ. վիճակագրական ժողովածու:



«Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագրի» շրջանակներում ստեղծվել են ընտանիքի պլանավորման 77 կաբինետներ, և լուսավորական ու քարոզչական աշխատանք է ծավալվել արքրտների թվի կրճատման և ժամանակակից հակաբեղմնավորիչների ակտիվ կիրառման ուղղությամբ: Սակայն ծրագիրը շոշափելի արդյունքներ չի տվել:

«Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագրի» իրականացման շրջանակներում կանանց կոնսուլտացիաներում, ընտանիքի պլանավորման կաբինետներում բացատրական աշխատանք է տարվում անվտանգ մայրության, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, առողջ ապրելակերպի և անվտանգ սեռական վարքագծի վերաբերյալ: Բացվել են անանուն հետազոտության կաբինետներ: Կատարվում է բոլոր հղի կանանց (հատկապես ռիսկային խմբից, իրենց համաձայնությամբ) ՄԻԱՎ վարակի առկայության հետազոտություն, ինչն արդեն իսկ դրական արդյունքներ է տվել:

Վերարտադրողական առողջության բարելավման ծրագրի իրականացումը նպաստեց նաև վեներական հիվանդություններով հիվանդացության կրճատմանը:

Հայաստանում աղքատության և սոցիալական լարվածության աճը, ավելի հաճախակի տեղաշարժերը և միգրացիան, արժեքների համակարգի փոփոխությունները և հանցավորության աճը նպաստել են թմրանյութերի չարաշահման աճին, ոչ անվտանգ սեքսուալ վարքագծի տարածմանը: Հետևանքն այն է, որ մեծացրել է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկը: Դիտվում է ՉԻԱՀ-ի հիվանդացության աճման կայուն դինամիկա: Ըստ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալների՝ Հայաստանի 436 ՄԻԱՎ վարակակիր քաղաքացիներից 331-ը (76%) տղամարդիկ են և 105-ը (24%)՝ կանայք: 1998 թ. Հայաստանում ՄԻԱՎ/ՉԻԱՀ հայտնաբերվելու պահից մինչև 2007 թվականի փետրվարի 28-ը գրանցվել է 102 մահվան ելքով դեպք, որոնցից 71 տղամարդ, 18 կին: Սակայն համաձայն հաշվարկային տվյալների, որոնք ստացվում են հատուկ մեխանիզմների կիրառման հիման վրա, բնակչության առավել խոցելի խմբերն ուսումնասիրելիս ՄԻԱՎ վարակակիրների թիվը հանրապետությունում հասնում է 2800-ի:

Ըստ 2004 թվականի տվյալների՝ արտադրական վնասվածքներից տուժել է 85 մարդ, որոնցից 7-ը՝ կանայք, որը կազմում է տուժածների ընդհանուր թվի 8,2%-ը: 6 կին տուժել է Երևանում և 1 կին՝ Արմավիրում⁶⁴: Աշխատանքի պետական գործակալության վերջին տվյալներով, 2006 թվականին արտադրությունում գրանցվել է 26 դժբախտ պատահար, և 59 աշխատող ձեռք է բերել մասնագիտական հիվանդություն: Գենդերայնորեն տարաբաժանված վիճակագրություն ներկայացված չէ:

64 Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004 թվականին և դինամիկ շարքեր: Վիճակագրական ժողովածու: Երևան, 2005, էջ 154:



Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- համագործակցելով ՀԿ-ների հետ՝ անցկացնել միջոցառումներ՝ ուղղված կանանց իրազեկմանը առողջության պահպանման իրավունքների, ներառյալ վերարտադրողական իրավունքների, ինչպես նաև առողջ կենսակերպի մասին,
- մեծացնել առողջապահության համակարգի բյուջետային ֆինանսավորման ծավալը և համապատասխանեցնել այն որակյալ առողջապահական ծառայությունների ապահովման պահանջներին՝ հաշվի առնելով գենդերային բաղադրիչը, մշակել և իրականացնել հիվանդացության կանխարգելման ուղղված ծրագրեր,
- մշակել և իրականացնել ընտանիքի պլանավորմանն ուղղված ծրագրեր, հասնել արքորսների՝ որպես ծնելիության սահմանափակման մեթոդի, թվի կրճատման:

Հոդված 14

Գյուղի կանանց նկատմամբ խտրականության վերացումը

Հիմնախնդիրները.

- **Գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքի և կենցաղի անբարենպաստ պայմանները:**
- **Վարկերի և ռեսուրսների սահմանափակ մատչելիությունը:**
- **Անիրազեկությունը աշխատանքային իրավունքների մասին:**
- **Առողջապահական ծառայությունների ոչ բավարար մատչելիությունը:**

Կոնվենցիայի կոմիտեն ՀՀ կառավարությանը հասցեագրած իր հանձնարարականներում առանձնակի ուշադրություն է հատկացրել գյուղի կանանց տնտեսական աջակցմանը նպատակաուղղված հատուկ ծրագրերի բացակայությանը:

2003 թ. տվյալների համաձայն՝ գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում զբաղված կանանց թիվը կազմում է այս ճյուղերում զբաղվածների ընդհանուր թվի 43,4%-ը: Գյուղի կանանց աշխատանքի պայմանները ծայրաստիճան անբարենպաստ են, կանանց 50%-ը աշխատում է սանիտարական նորմերին չհամապատասխանող պայմաններում: Կանայք կազմում են վնասակար աշխատանքներում զբաղվածների 31%-ը, արտադրական անվտանգության պահանջներին չհամապատասխանող պայմաններում աշխատողների՝ 24%-ը, կանանց ավելի քան 50%-ը ծանր ֆիզիկական աշխատանք է կատարում, որը չի համապատասխանում կանացի օրգանիզմի ֆիզիոլոգիական առանձնահատկություններին⁶⁵: Գյուղատնտեսական աշխատանքների

65 **Գենդերային իրավիճակը Հայաստանում. փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը հազարամյակի նպատակների համատեքստում** / Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 2005, էջ 27:



մեծ մասը փոքր մեխանիզացիայի և տեխնիկական սպասարկման ծառայությունների թանկության պատճառով ձեռքով է կատարվում:

Գյուղատնտեսական ոլորտում աշխատանքի բաժանման գործում գեներային անհամաչափություն է նկատվում: Հողային բարեփոխումների իրականացման և գյուղատնտեսական վարկերի ու փոխառությունների մատչելիության հարցում հիմնականում հենց կանայք են խտրականության ենթարկվել:

Հայաստանում անբավարար են անվճար իրավաբանական ծառայությունները, ներառյալ գյուղական բնակավայրերի կանանց իրավական գրագիտությունը, չկան իրավաբանական ծառայության շրջիկ, գյուղի կանանց բնակավայրերին հարող կենտրոններ:

Գյուղում նշանակալի է այն կին բնակիչների բաժնեմասը, որոնք պատրաստ և ունակ են ընդգրկվելու նոր շուկայական հարաբերություններով կարգավորվող աշխատանքներում: Նոր ժամանակների հայտանշաններից մեկը տնային տնտեսություններ գլխավորող գյուղի կանայք են (29,4%)⁶⁶, սակայն այդ կանանց մեծ մասը անհրաժեշտ գիտելիքների և պատրաստականության խնդիր ունի, նրանք զուրկ են իրականացվող բարեփոխումների, գյուղատնտեսական նորարարությունների մասին տեղեկատվությունից: Նրանք պետական աջակցության և մասնավոր իրենց ձեռնարկատիրական գործունեության սկզբնական շրջանում մեղմ, գեներայնորեն զգայուն հարկային քաղաքականության կարիք ունեն: Գյուղում փաստորեն չեն իրականացվում կանանց մասնագիտական ուսուցման ծրագրեր, չեն մշակվել կանանց մասնագիտական որակավորման բարձրացման անընդհատությունն ապահովող մեխանիզմներ՝ աշխատանքի շուկայում նրանց մրցունակությանը նպաստելու նպատակով:

Վերջին ժամանակներում սկսել են գործել մի շարք վարկային և դրամաշնորհային ծրագրեր, որոնք աջակցություն են նախատեսում կանանց կողմից գլխավորվող գյուղացիական տնտեսություններին, հատկապես հեռավոր և լեռնային շրջաններում: Ագրարային ոլորտին և դրա առանձին ճյուղերին առնչվող նպատակային ծրագրերը ուղղված են գյուղական բնակչության սոցիալական և տնտեսական վիճակի բարելավմանը և բնականաբար ներառում են նաև կանանց կենսամակարդակի բարձրացում, նրանց համար բարենպաստ աշխատանքային պայմանների ստեղծում, ձեռքի աշխատանքի նվազեցում՝ շնորհիվ գյուղատնտեսական արտադրության մեքենայացման, նոր աշխատատեղերի ստեղծում, ինստիտուցիոնալ բարեփոխումներ և այլն:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը վերջին տարիներին նախաձեռնել է ագրոարդյունաբերական ոլորտում կոոպերացման սկզբունքով գործող բազմաֆունկցիո-

66 Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական ժողովածու: Երևան, 2005, էջ 48:



նալ կառույցների ստեղծում, որոնց նպատակն է հասունացած հիմնախնդիրների համատեղ լուծման խթանումը և գյուղական համայնքներում արտադրության զարգացումը: Հանրապետությունում գործում է գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող մոտ 80 կառույց, որոնց աշխատանքներին կանայք ակտիվորեն են մասնակցում: Շուրջ 50 վարկային ընկերակցություն փոքր դրամաշնորհների, պարենային վարկերի և վարձակալության հիմունքներով սարքավորում տրամադրելու միջոցով ֆինանսական աջակցություն է ցույց տալիս գյուղի տնտեսվարողներին: Գիտվում է կանանց ակտիվացում այդ վարկային ընկերակցությունների աշխատանքներում:

Ըստ Ազգային ծրագրում նախանշված նախագծերի, որոնք նպատակաուղղված են գյուղական բնակավայրերում ժողովրդական արհեստների ընդլայնմանը, ինչպես նաև գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության խթանմանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում իրականացվում է ավանդական արհեստների վերածննդի միջոցով կանանց զբաղվածությունը և կենսամակարդակը բարձրացնելու ծրագիր:

Բայց և այնպես պետությունը կանանց համար վարկերի և միկրովարկավորման ծրագրեր, հողի և անշարժ գույքի տնօրինման մատչելիության երաշխիքներ ապահովող մեխանիզմներ չի մշակել: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, մարզպետարանները, տեղական ինքնակառավարման մարմինները անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկում՝ ուղղված գյուղական և հեռավոր շրջաններում տղամարդկանց և կանանց համար ռեսուրսների հավասար բաշխման ապահովմանը, չեն իրականացվում խորհրդատվական ծրագրեր կանանց շուկաների և նորարարական տեխնոլոգիաների մատչելիության հնարավորություններին ծանոթացնելու նպատակով:

Գյուղի ենթակառուցվածքի քայքայումը հանգեցրել է կենցաղային պայմանների վատթարացման, ինչը առանձնապես բացասական ազդեցություն է ունեցել կանանց վրա՝ մեծացնելով նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

Սեփական հողակտորներում աշխատող կանայք չեն ստանում հղիության և ծննդաբերության, հիվանդ երեխային խնամելու նպաստներ և այլ սոցիալական երաշխիքներ:

Երաշխավորություններ

ՀՀ կառավարությանը.

- ձեռնարկել միջոցներ՝ ուղղված գյուղատնտեսության ոլորտում աշխատող կանանց սոցիալական երաշխիքների ընդլայնմանը, մշակել և իրականացնել հատուկ ծրագրեր՝ ուղղված գյուղի կանանց արտոնյալ պայմաններով փոքր վարկերի, գյուղատեխնիկայի տրամադրմանը,

Մ
Ա
Ս
3



- բարձրացնել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը գյուղական բնակավայրերում տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման գործում,
- ստեղծել շրջիկ ամբուլատորիաներ հեռավոր և դժվար հասանելի գյուղերում բժշկական օգնություն ցույց տալու համար,
- իրականացնել գյուղի կանանց՝ աշխատանքի և առողջության իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացման աշխատանքներ:



Եզրակացություն

1. Հայաստանի Հանրապետությունում որոշակի դրական տեղաշարժ է դիտվում կանանց վիճակի բարելավման, իրավունքների պաշտպանության և հնարավորությունների ընդլայնմանն առնչվող հարցերի ողջ սպեկտրով: Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կառավարությունը ձեռնարկել է մի շարք միջոցառումներ երկրորդ հաշվետու զեկույցի վերաբերյալ Կոնվենցիայի կոմիտեի հանձնարարականների իրականացման ուղղությամբ, և որոշ հարցերում դրական տեղաշարժ է նկատվում, այնուամենայնիվ հանձնարարականներում նշված հիմնախնդիրների մեծ մասը վերջնական լուծում չի ստացել: Մի շարք հիմնախնդիրների առնչությամբ իրավիճակը չի փոխվել, իսկ կանանց քաղաքական մասնակցության, իշխանության ղեկավար մարմիններում և տնտեսական, քաղաքական և այլ որոշումների ընդունման մակարդակում նրանց ներկայացվածության տեսանկյունից դրսևորվել են բացասական միտումներ: Եվ թեպետ ամենաբարձր մակարդակում որոշում ընդունող անձինք հստակ ըմբռնում են ցուցաբերում և շեշտադրում են այն գաղափարը, որ կանանց նկատմամբ խտրականության վերացումը տղամարդկանց և կանանց միջև իրական հավասարության հիմնարար սկզբունքի իրականացման նախադրյալ է, այնուամենայնիվ բացակայում է այդ սկզբունքի կենսագործման քաղաքական կամքը:

2. «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակությունում նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» ընդունումը և իրականացումը լուրջ նախադրյալներ է ստեղծում կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու և գենդերային հավասարության ու արդարության հասնելու ուղղությամբ թե՛ կառավարական, թե՛ ոչ կառավարական կառույցների ջանքերի ակտիվացման և ավելի նպատակամետ ու արդյունավետ գործողությունների համար: Ծրագրի արդյունավետ իրագործումը միայն կնպաստի «ժողովրդավարության ճեղքվածքի» հաղթահարմանը և կայուն, դինամիկ ու հաստատապես զարգացող հասարակության կայացմանը, որը արժանապատիվ կյանք է ապահովում բոլոր քաղաքացիների համար՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց:

3. Մեծ աշխատանք է տարվել ազգային օրենսդրությունը կոնվենցիային և միջազգային-իրավական այլ փաստաթղթերին համապատասխանեցնելու ուղղությամբ: Սա-



կայն, թեև կանայք ձևականորեն օժտված են հավասար իրավունքներով (և Սահմանադրությունում ամրագրված է հատուկ դրույթ խտրականության արգելման վերաբերյալ), կարելի է արձանագրել իրավաբանական նորմերի և գործնականում դրանց փաստացի իրականացման զգալի տարբերությունը:

4. Անհրաժեշտ են ՀՀ կառավարության հետևողական, կանոնավոր և արդյունավետ ջանքեր, ինչպես նաև սոցիալական գործընկերություն նրա և հասարակական կազմակերպությունների միջև՝ հայրիշխանական կարծրատիպերը հաղթահարելու, նոր իրավահավասար ժողովրդավարական գենդերային մշակույթ ձևավորելու համար: ՀԿ-ները պետք է ստանձնեն առաջանցիկ ակտիվ դեր գենդերային գրագիտության տարածման և բնակչության իրազեկության մակարդակի բարձրացման ուղղությամբ քարոզարշավների անցկացման գործում, պետք է համառորեն պարզաբանեն, որ պաշտպանվածությունը խտրականությունից՝ որպես Կոնվենցիայում և ազգային օրենսդրությունում ամրագրված համընդհանուր իրավունք, և գենդերային հավասարության սկզբունքը համամարդկային արժեքներ են:

5. Սույն այլընտրանքային զեկույցը ոչ միայն Կոնվենցիայի իրականացման ընթացքի, այլև, հիմնվելով Կոնվենցիայի կոմիտեի հանձնարարականների վրա, նրա մի շարք առանցքային դրույթների հետ կապված իրավիճակի գնահատման փորձ է: Ուսումնասիրված տվյալների և նյութերի վերլուծությունը, դրա հիման վրա մշակված երաշխավորությունները, որոնք հասցեագրված են առաջին հերթին ՀՀ կառավարությանը, քաղաքացիական հասարակության ինստիտուտներին և բոլոր շահագրգիռ հաստատություններին, կարող են օգտագործվել առաջնահերթությունների և խնդիրների հստակեցման, գործողությունների օպտիմալացման, ավելի արդյունավետ համադասման և համագործակցության նպատակով:



Հավելված I

Աշխատանքի եզրափակիչ փուլում զեկույցը քննարկվել է հասարակական կազմակերպությունների լիդերների ու ակտիվիստների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Քննարկմանը մասնակցել են 9 քաղաքական կուսակցությունների («Հայաստանի հանրապետական կուսակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Օրինաց երկիր», «Ժառանգություն», «Հայաստանի ժողովրդական կուսակցություն», «Ազգային միասնություն», «Ազգային ժողովրդավարական կուսակցություն», «Հնչակյան» և «Ազգային ժողովրդավարական միություն») ակտիվիստ կանայք, 6 հասարակական կազմակերպությունների (Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա և նրա 9 մասնաճյուղերը, Կանանց հանրապետական խորհուրդ, Հասարակական կազմակերպությունների կենտրոն, «ՊրոՄեդիա-Գենդեր», «Հոգևոր Հայաստան», «Բարեփոխում») լիդերներ և ակտիվիստներ:

Ձեկույցի ներկայացումն անցկացվել է զեկույցի մեթոդաբանության, Կոնվենցիայի հոդվածների վերլուծության արդյունքում վեր հանված հիմնախնդիրների ծանոթացման ձևաչափով, մասնակիցների ուշադրությունը հրավիրվել է դրանց հաղթահարման երաշխավորությունների վրա:

Կանանց ՀԿ-ների լիդերները և քաղաքական կուսակցությունների կին ներկայացուցիչները ընդհանուր առմամբ հավանություն են տվել զեկույցի բովանդակությանը, նրանում արված եզրակացություններին և երաշխավորություններին: Ձեկույցի քննարկման ընթացքում արվել են առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել հեղինակների կողմից և ընդգրկվել զեկույցի վերջնական շարադրանքում:

Ձեկույցի հեղինակներն իրենց պարտքն են համարում ստորև ներկայացնել քննարկման մասնակիցների առաջարկությունները:

Ձեկույցի քննարկման ընթացքում մի շարք առաջարկություններ արվեցին՝ կապված գենդերային հավասարության ազգային մեխանիզմի՝ որպես կանանց նկատմամբ խտրականության հաղթահարման գործիքի, և կանանց իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծման, մասնավորապես հանրապետությունում կանանց իրավունքների գծով օմբուդսմենի ինստիտուտի հիմնադրման անհրաժեշտության հետ: Նշվեց նաև կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ երաշխավորող օրենքի ընդունման անհրաժեշ-



տությունը: Քննարկմանը մասնակից ԱԺ պատգամավորները պատրաստակամություն հայտնեցին պաշտպանել օրենսդրական նախաձեռնությունները:

Հատուկ ուշադրություն հատկացվեց սեքսիզմի հաղթահարման հիմնախնդրին: Քաղաքական կուսակցությունների կողմից բերվեցին մի շարք օրինակներ, որոնք հաստատում էին հասարակական-քաղաքական կյանքում և ՋԼՄ-ներում սեքսիստական գործելակերպի և տեխնոլոգիաների առկայությունը: Այդ կապակցությամբ առաջարկվեց, նախ, օրենսդրորեն ամրագրել սեքսիզմի դրսևորումների համար պատասխանատվությունը, երկրորդ՝ ներդնել միջազգային ասպարեզում փորձարկված հասարակական վերահսկողության մեխանիզմները:

Ջրաղվածության ոլորտում խտրական դրսևորումների շարքում առանձնացվեց տարիքի հատկանիշով խտրականությունը: Ընդգծվեց բնակչության՝ աշխատանքային իրավունքների խախտումների մասին իրազեկության բարձրացման անհրաժեշտությունը: Թրաֆիկինգի դեմ պայքարի ոլորտում պետության կողմից իրականացվող միջոցառումները համարվեցին ոչ բավարար, և ընդգծվեց այդ աշխատանքներում հասարակական սեկտորի առավել լայն ընդգրկման անհրաժեշտությունը:

Առաջարկություն արվեց աջակցել կանանց հասարակական սեկտորի հզորացմանը և խտրական գործելակերպի հաղթահարման գործում նրա շփումների ընդլայնմանը ՋԼՄ-ների և քաղաքացիական հասարակության մյուս ինստիտուտների հետ:

Արժարժվեց խտրականության հաղթահարման գործում կանանց համերաշխության հիմնախնդիրը կուսակցությունների հետ համագործակցության համատեքստում, ինչպես նաև Կոնվենցիայի դրույթների իրականացման վերահսկողության և անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնությունների լրբիմզի հիմնախնդիրը: Նշվեցին քաղաքական կուսակցություններում կանանց նկատմամբ խտրականության հիմնախնդիրները, որոնք ներկաները կապեցին ներկուսակցական ժողովրդավարության ճեղքվածքի հետ:

Կրթության և առողջապահության ոլորտներում խտրական գործելակերպի քննարկման ընթացքում տարածաշրջանների ներկայացուցիչները շեշտադրեցին դրա սրությունը գյուղական վայրերում: Ընդգծվեց այլընտրանքային զեկույցում արված երաշխավորությունները կրթության, առողջապահության ոլորտների և աղքատության հաղթահարման պետական ծրագրերում հաշվի առնելու անհրաժեշտությունը, որպեսզի կանխվեն զեկույցի հեղինակների կողմից վեր հանված բացասական միտումների և գործելակերպի զարգացումները: Դժգոհություն հայտնվեց «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» իրականացման ընթացքի կապակցությամբ, ընդգծվեց հասարակության անբավարար իրազեկությունը թե՛ այդ ծրագրի, թե՛ Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ:

Մի շարք առաջարկություններ, որոնք արվեցին քննարկման ընթացքում, անմիջականորեն չէին առնչվում ՄԱԿ-ի Կոնվենցիայի դրույթներին, սակայն վկայում էին, որ լսարանը բավական շահագրգիռ է հասարակության լիարժեք զարգացումը խոչընդոտող զեկույցային հիմնախնդիրների լուծման հարցում:



Հավելված II

Տեղեկատվություն Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալադատական մասին

Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալադատական հիմնադրվել է 1995 թ. դեկտեմբերի 13-ին: Սոցիալադատական ոչ կառավարական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է:

Սոցիալադատական ունի 35 մասնաճյուղ Երևանում և հանրապետության մարզերում: Սոցիալադատական ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության (UNDPPI) ընկերակցող անդամ է և Համալսարանական կանանց միջազգային ֆեդերացիայի(IFUW) անդամ:

Սոցիալադատական առաքելությունն է

- նպաստել Հայաստանում ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության ձևավորմանը,
- աջակցել մարդու իրավունքների պաշտպանության նախաձեռնություններին, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը,
- աջակցել հասարակության մեջ կանանց կարգավիճակի բարձրացմանը, կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության ակտիվացմանը, գենդերային խտրականության և գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը,
- աջակցել քաղաքացիական նախաձեռնությունների խթանմանը, «խաղաղության մշակույթի» քարոզչությանը և խաղաղասիրական գործընթացների իրականացմանը,

Սոցիալադատական գործում է որպես մի կառույց, որը զբաղվում է ազգային ու միջազգային մակարդակներով քաղաքացիների իրավունքների պաշտպանությամբ, սոցիալական լոբբինգով, գիտական և կրթական, տեղեկատվական և վերլուծական ու խորհրդատվական գործունեությամբ:

Սոցիալադատական 2000 թ. հունվարին մասնակցել է Ժնևում կայացած «Պեկին+5» ՀԿ-ների ֆորումին և 2000 թ. հունիսի 5-9-ը՝ Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի «Կանայք 2000. գենդերային հավասարություն, զարգացում և խաղաղություն XXI դարում» հատուկ նստաշրջանին:

2004 թ. դեկտեմբերին Սոցիալադատական մասնակցել է «Պեկին+10» գործընթացների շրջանակներում Ժնևում կայացած նախապատրաստական խորհրդաժողովին և 2005 թ. փետրվար-մարտ ամիսներին Նյու Յորքում՝ Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 49-րդ նստաշրջանին:

Սոցիալադատական գործունեությունը

Սոցիալադատական իրականացրել է «Կանայք և զարգացումը. իրավունքներ և հնարավորություններ», «Խաղաղության մշակույթ հանուն զարգացման», «Կինը և հասարակությունը: Գենդերային հավասարությունը ժողովրդավարության զարգացման հեռանկարում», «Կանանց նախա-



ձեռնություններ. աջակցություն ժողովրդավարությանը և քաղաքացիական հասարակությանը», «Աջակցություն Պեկինյան գործողությունների ծրագրին, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայի և հազարամյակի զարգացման նպատակների գնահատում», «Գեղերային գիտելիքները որպես ժողովրդավարական մշակույթի և իրավագիտակցության նախադրյալ» ծրագրերը:

1997-2007 թթ. Ասոցիացիան անց է կացրել 10 միջազգային խորհրդածողովներ

- «Փոխակերպվող հասարակության կանանց հիմնախնդիրները և իրավունքները. իրականություն և հեռանկարներ»,
- «Կանայք և զարգացումը. իրավունքներ և հնարավորություններ»,
- «Կինը և հասարակությունը: Գեղերային իրավահավասարությունը ժողովրդավարության զարգացման հեռանկարում»,
- «Հայաստանի կանայք 21-րդ դարում: Գեղերային հավասարություն. կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցություն»,
- «Խաղաղության մշակույթ. ժողովրդավարություն և մշակույթների երկխոսություն»,
- «Կանանց շարժումը Հայաստանում. նախապատվություններ և զարգացման ռազմավարություններ»,
- «Քաղաքակրթությունների երկխոսություն. ժողովրդավարություն և խաղաղություն»,
- «Ժողովրդավարության կոնսոլիդացում. քաղաքացիական հասարակությունը գլոբալացման հեռանկարում»,
- «Մասնակցության ժողովրդավարություն. քաղաքացիական նախաձեռնություններ և պատասխանատվություն»,
- «Անցումային շրջան. քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարության կառուցման հարցերը»:

Կանանց լիդերության դպրոց

2000 թ. հիմնադրված Կանանց լիդերության դպրոցի «Բարձրագույն քաղաքական դասընթացներ» ծրագրով 23 հոսքերում սովորել և ավարտել են քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ավելի քան 740 կին լիդերներ և ակտիվիստներ:

Ասոցիացիայի կենտրոնները

Գեղերային հետազոտությունների կենտրոնը և Տեղեկատվական ու Վերլուծական կենտրոնները ստեղծվել են 1996 թ., Խաղաղության և ժողովրդավարության կենտրոնը՝ 2000թ.: Կենտրոնները իրականացնում են հետազոտական և կրթական ծրագրեր ու հանդես են գալիս որպես մտավոր ներուժի կառույցներ՝ աջակցելով ասոցիացիայի բազմաբնույթ գործունեությանը:

Գեղերային հետազոտությունների կենտրոն

Ասոցիացիան նախաձեռնել է Հայաստանի 10 համալսարաններում և 35 միջնակարգ հանրակրթական դպրոցներում գեղերային կրթության ինստիտուցիոնալացման գործընթացը մշակվել են գեղերային կրթության պետական չափորոշիչները, ուսումնական ծրագրերը և ձեռնարկները, նախապատրաստել է դասախոսական և ուսուցչական կազմը:

Ժողովրդավարության և խաղաղության կենտրոն

2000-2007 թթ. 72 կլոր սեղանների բանավեճերին և երկխոսություններին մասնակցել են ավելի քան 2000 կանայք և տղամարդիկ՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Իջևանում, Դիլիջանում, Գորիսում, Աշտարակում, Կապանում, Էջմիածնում, Արվյանում և Ստեփանավանում:



Ժողովրդավարության և խաղաղության կենտրոնը դարձել է յուրօրինակ «հանրային համա- ժողով», որտեղ հասարակայնորեն ակտիվ կանանց և տղամարդկանց հնարավորություն է տրված մասնակցելու բանավեճերի՝ նվիրված հասարակական զարգացման այնպիսի հրատապ հիմնահարցերի, ինչպիսիք են ժողովրդավարության մշակույթը, քաղաքացիական և քաղաքական երկխոսությունը, քաղաքացիական համաձայնությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, խաղաղարար գործունեությունը, ժողովրդավարական ինստիտուտների կայացումը, ընտրական գործընթացների կատարելագործումը, քաղաքացիական մասնակցու- թյան և քաղաքացիական պատասխանատվության բարձրացումը, ինչպես նաև տեսակետ ձևավորելու հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացների վերաբերյալ:

Ժողովրդավարության և խաղաղության ու Գեներային հետազոտությունների կենտրոնները 2002-2006թթ. կատարել են սոցիոլոգիական հետազոտություններ հետևյալ հիմնախնդիրների վերաբերյալ.

- փոխակերպվող հասարակության պայմաններում Հայաստանում կանանց դրության և սոցիալական կարգավիճակի ուսումնասիրում
- դարաբաղյան կոնֆլիկտի քաղաքական չկարգավորվածության պայմաններում պատերազ- մի և խաղաղության նկատմամբ կանանց և տղամարդկանց վերաբերմունքի բացահայտում,
- կանանց ակտիվության աստիճանի, քաղաքացիական հասարակության ինստիտուտներից և իշխանական կառույցներից տղամարդկանց և կանանց սոցիալական սպասումների ուսումնասիրում,
- նախընտրական իրավիճակի օբյեկտիվ պատկերի, կանանց և տղամարդկանց էլեկտորալ նախապատվությունների, ընտրական գործընթացներում հասարակական կազմակերպու- թյունների տեղի և դերի ուսումնասիրում,
- Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման և ժողովրդավարացման գործընթացների միտումների և դինամիկայի ուսումնասիրում:

Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները հրատարակվել են հետևյալ վեց ժողովածուներում.

- «Կանայք զարգացման մեջ: Ժամանակակից հասարակության գեներային հիմնահարցեր» (1999)
- «Ընտրությունները և ժողովրդավարությունը՝ քաղաքացիական հասարակության գործոն» (2003),
- «Ընտրական ժողովրդավարություն: Ունի՞ արդյոք Հայաստանը այլընտրանք» (2003, ռուսե- րեն և հայերեն),
- Հայ հասարակության ժողովրդավարացում. գեներային հեռանկարներ (2004, ռուսերեն)
- «Հայ հասարակության ժողովրդավարացումը. իրողություններ և միտումներ» (2004) (հայե- րեն),
- «Քաղաքական մասնակցությունը անցումային հասարակությունում. գեներային հավասա- րության չափումը» (2006, ռուսերեն, հայերեն և անգլերեն):

Լրատվական-վերլուծական կենտրոն

Ասոցիացիայի լրատվական-վերլուծական կենտրոնը 1997-2007թթ. հրատարակել է 81 անուն ժողովածուներ՝ նվիրված քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության, քաղա- քակրթությունների երկխոսության, գլոբալացման, օրենսդրության գեներային փորձաքննու- թյան հիմնախնդիրներին, և «Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի 49 համար- ներ:



Ասոցիացիայի կողմից հրատարակված գրքերն ու ժողովածուները (1997-2007)

- 10 միջազգային խորհրդատուների նյութերի ժողովածուներ:
- «Գեներալային հետազոտություններ» մատենաշարի 38 ժողովածուներ և ուսումնամեթոդական նյութեր:
- «Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի 49 համարներ՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:
- «Փոփոխությունների պլանավորում» մեթոդական ձեռնարկ:
- Պեկինյան 4-րդ համաշխարհային խորհրդատուի գործողությունների ծրագիր:
- Միսիլիա Անդեռեսն «Գեներերը և զարգացումը» գործնական ձեռնարկ:
- Կանանց անվտանգությունը հասարակությունում, ընտանիքում, ամենուր. բռնության հաղթահարման ուղիներ:
- «Կանանց քաղաքացիական մասնակցություն» մարզերում անցկացված սեմինարների նյութերի ժողովածու:
- Ուսանողների, երիտասարդ դասախոսների և հետազոտողների խորհրդատուների նյութերի 6 ժողովածուներ:
- «Ընտրական ժողովրդավարություն. ունի՞ արդյոք Հայաստանը այլընտրանք»:
- «Պեկինն իմ կյանքում 10 տարի անց»:
- «Գեներալային կրթությունը բարձրագույն դպրոցում» պետական կրթական չափորոշիչների նախագիծ:
- «Գեներալային իրավիճակը Հայաստանում: Փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը Հազարամյակի նպատակների համատեքստում». (մոնիտորինգի արդյունքներ):
- «ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գեներալային վերլուծություն»:
- «Զաղաքական մասնակցությունը անցումային հասարակությունում. գեներալային հավասարության չափումը»:
- «Հայաստանի Հանրապետությունում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ»:
- «Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն» միջազգային իրավական փաստաթղթերի և ՀՀ օրենքների ժողովածու:
- «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ.» Այլընտրանքային զեկույց:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
Գենդերային հետազոտությունների կենտրոն

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի
վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը
Հայաստանի Հանրապետությունում
2002-2007 թթ.

Այլընտրանքային զեկույց

Գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար՝
Ջենմա Զասրաթյան

Խմբագրական կազմ՝ Ջենմա Զասրաթյան (գլխ. խմբագիր), Անահիտ Զարությունյան, Թամարա
Յովնաթանյան, Վլադիմիր Օսիպով, Լիլիթ Զաքարյան

Չայերեն տեքստի խմբագրում՝ Անահիտ Զարությունյան

Չամակարգչային ապահովումը՝ Պայանե Սերոյանի,
Իրինա Շահինյանի,

Մակետավորումը՝ Արթուր Բոյախյանի

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
0002, Երևան, Սարյան 22, 12-րդ հարկ:
Չեռախոս, ֆաքս. (374.10) 53-68-02, E-mail: aawue@arminco.com

Տարածվում է անվճար

«ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարան:
Հասցե՝ Երևան, Ավան, Դավիթ Մալյան 45
Հեռ. (374. 10) 54-49-82 (գրաս.), (374. 10) 62-38-63 (տպ.)
Էլ. փոստ asogik@netsys.am